

2013

N109.

Հայ
960

ՆԻԿՈԼԱՅՈՒ ԵԼԵՐՈՎԻ

PA
14726

Դ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՐՆՔԻ

ՎԱԽԱՆԱԿԱՆ ԵՊԱՏԱԿԸ

Թարգմանեց

Խաչատր Քահանայ Փանեանց

427.




ՑԳԵՐԵՆ ՄԱՅՐ ԱԹԱՅԻՑ Ա. ԷՇՐԻՆԵՒՆԻ

1901

9032

Дозволено Цензурою 14 Марта 1901 г. г. Тифлисъ.



(5124
38) 960-2013
h.B. 953




ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ

ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

I

Կեանքը մարդու համար մի մեծ բարիք է, անգնահատելի մի գանձ: Կեանքի և նրա վիճակների մեջ, նրա գաղանիքների ու բաղմազան արտաքին հանդամանքների մեջ, նրա ոյժերի ու իրան յատուկ գործողութիւնների մեջ՝ պարունակուում է մարդու համար բաւականութեան, ուրախութիւնների և վայելչութեան մի անսպառելի աղբիւր: Մարդուն ուրախացնում են նոյն իսկ զուտ մարմնական հանգամանքներ, որոնք նա զգում և շօշափում է, ինչպէս օրինակ՝ պատանեկութեան կենսական ոյժերի կատարեալ բողքոջիլք, կատարեալ առողջութիւնը և հանգըստութեամբ ամրապնդած կազմուածքի զուարժութիւնը: Գոյութեան տպաւորու-



թիւնները, որ ստանում ենք մեզ շըջապատող
ընութիւնից, պատճառում են շատ պայծառ,
թէև անցողական զգացմունքներ։ Բնու-
թիւնը մերթ մարում թալկանում է, մերթ
նորից կենդանանում և արտայայտուում բազ-
մազիսի երեսյթներով, որոնք հիացնում են
մարդուն կամ իրանց վսեմութեամբ, կամ
թէ գերում են իրանց խաղաղ չքնաղութեամբ
և զիւթիչ գեղեցկութեամբ։ Այսուհետեւ
մարդս վայելում է մի շարք անընդհատ յա-
ջորդող բաւականութիւններ, ձգտելով զանա-
զան նպատակների և որոշ կերպով պատկե-
րացնելով իւր ձգտումների առարկաները և
յաջողութեամբ հեռացնելով արգելք լինող
բոլոր խոչընդուները՝ վերջապէս հասնում և
տիրապետում է նրան։ Աակայն մեզանից իւ-
րաքանչիւրի ուրախութիւնները կարող են
լինել էլ աւելի մաքուր և կայուն այն ժա-
մանակ, երբ մենք անջատուելով մարմնական
և առհասարակ արտաքին աշխարհից, խո-
րասուզուենք մեր մէջ և կենդրոնանանք մեր
հոգեոր կեանքի շըջանակում։ Այստեղ, յի-
շողութեան սլահպանութեամբ, մտաւոր հայ-
եացքի առաջ, ծագում են անցեալի պատ-
կերները, պատկերներ՝ որոնք թանգ են մեր
սրտի համար, որոնք լուսաւոր են և ժամա-
նակի ընթացքում մաքրուած ու զտուած

ամեն պակասութիւններից։ Նրանք պատկանում են անդարձ անցեալին, որի մասին մտածելիս՝ մարդու սիրտը լցուում է արևութեամբ, իսկ նրա հետ շփուելուց՝ մարդու հոգին աւելի զտուում ու քնքշանում է։ Այստեղ՝ հոգեոր կեանքի մէջ, երեակայութիւնն ստեղծում է ապագայի իդեալները, որոնց մէջ պարունակուում է այն ամենը, ինչ որ ծանօթ է մարդուն, այն է՝ ամենալաւը և ամենազեղեցիկը։ Այդ գաղափարների իրագործումը հեռու, աւելի հաւանական՝ անհասանելի է։ Բայց հենց նրանց պարզ կերպով միայն մտաբերելն էլ մարդու հոգին լցնում է քաղցր յուզմունքով։ Այստեղ վերջապէս գործում է խելքը և միտքը կատարում է իւր գործը։ Բայց խելքի գործունեութիւնը և մտքի կենդանի ու անդադրում աշխատանքը, ինքն ըստ ինքեան, կեանքի միւս կողմերից անկախ, ամենամեծ վայելչութեան մի անսպառ գանձ է։ Գտնել հատ հատ վաստերի և երևոյթների մէջ եղած կապը, եզրակացութիւններ հանել թափանցել մարդկանց գործողութիւնների ու յարաբերութիւնների մէջ, գուշակել այդ գործողութիւնների և յարաբերութիւնների գաղտնի զսպանակները, տեսնել, — հաղիւ ձեռքբերած վաստերի հիման վրայ՝ անձնական

բարեկամութեան, մասնակցութեան և ընկերական պարզամտութեան շնորհիւ, — պատրանք, կեղծիք և թագցրած ամենաշնչին չարիքը, իսկ ցամաք, կոպիտ բնութեան մէջ, որից մեծամասնութիւնը խորշում է, — ոսկե, սիրտ, հետեւել հոգու խոկական շարժողութիւններին, — այս բոլորն՝ այնպիսի վսեմ զուարձութիւններ են, որպիսիք չի կարելի համեմատել ոչ մի բանի հետ և որ ոչ մի բանի հետ չի փոխիլ այն մարդը, ով ճաշակել է, այսպէս ասած, մտածողութեան քաղցրութիւնը, թէև այդ քաղցրութիւնը յաճախ թունաւորուում է սրտի կծու խայթոցով, մանաւանդ մի քանի անսպասելի յայտնագործութիւնների ժամանակի: Այստեղից էլ ծաղում է մարդու մէջ ոչ մի բանով չոչնչացող ծարաւ և մեծ սէր գէպի կեանքը: Այդ ծարաւի առաջ ամենածանր տանջանքներն անգամ անզօր են թուում: այդ սէրը չի թուլանում նոյն իսկ բաց գերեզմանի առաջ: Մարդն արդէն վայելել է կեանքը, նրա ոյժերը վերջնականապէս սպառուել են, նահասել է երկրային գոյութեան սահմանին, սակայն նրա մէջ գեռ վառ է նախկին սէրը գէպի կեանքը: Նա կամենում է գէթ մի անգամ ևս տեսնել նոր օտար արշալոյսը, նայել Առտուծոյ աշխարհին, լսել ծանօթ ձայ-

ներ ու խօսքեր, կամ առ նուազն՝ մի անգամ ևս զգալ և հասկանալ, որ նա դեռ կենդանի է նախկին կեանքով։ Մարդու մէջ այդ սէրը դէսի սեպհական կեանքը շարունակուում է առհասարակ ամբողջ կեանքի ընթացքում։ Նրան ուրախացնում է ամեն մի կենդանի իր, ըստ որում կենդանութիւն ունի, և ամեն մի անգամ մի աննշան կեանքի քայլայումը, օրինակ՝ մի համեստ ծաղկի կեանքից կտրուիլը, թառամիլը, ցաւադին կերպով արձագանք է դանում նրա սրտում։

||

Այնու ամենայնիւ հնարաւոր են և յաճախ լինում են այնպիսի ըոպէներ, երբ այդ մի և նոյն կեանքը իւր բազմազան ձգտումներով ու շահերով, ուրախութիւնների ու վայելչութիւնների այդ անսպառելի աղբիւրը մեզ համար կարող է կողցնել իւր բոլոր արժեքն ու բոլոր իմաստը։ Եւ մեզանից իւրաքանչիւրը, եթէ նա անասնական կեանքից մի քանի աստիճանով բարձր է կանգնած, իւմացել է, և դիտէ նմանօրինակ ըոպէներ։ Այդ այն ըոպէներն են, երբ մենք հակառակ մեր կամքին, այս ձանձրացուցիչ հարցերի ազդեցութեան տակ՝ «ինչո՞ւ, ինչո՞ւ համար է

այդ, սկսում ենք վերստին գնահատել այն
ամենը, ինչ որ մենք կատարել և կատարում
ենք, ինչին ձգտել և ձգտում ենք: Ենթա-
դրենք՝ թէ երկար նեղութիւններից ու ջան-
քերից յետոյ՝ մենք մի որոշ աստիճանով մօ-
տեցել ենք աստուածայինին: Նա ի՞նչ տուեց
մեզ: Արդեօք սեղանի վրայ մի աւելորդ կե-
րակուր. հանդերձի մի աւելորդ փոխնորդ.
թէ՝ բնակարանին մէջ մի քանի յարմար սե-
նեակներ: Բայց արժե՞ր արդեօք այդ բոլորը
գնել երկարամեայ լարուած աշխատանքի գնով,
թերեւ յաճախակի և ստորութիւններով:
Միլիոնաւոր մարդիկ շրջում են առանց նման-
օրինակ կասկածաւոր բարիքների. միւս կող-
մից՝ շատերն ունենում են աւելի մեծը, բայց
չի նշմարուում: որ ուրախութիւնը նրանց
կեանքի մշտական ուղեցոյցը լինի: Կամ թէ՝
մենք լարուած ուժով որոնել ենք հոչակ
սատնալ, և հասել ենք նրան մի որոշ շափով,
և մեր գլխին փառքի պսակ են դրել: Բայց
ինչի՞ համար է այդ: Արքան կարծ ժամա-
նակեայ է այդ պսակը: Առաւօտեան, երբ
դնում էին պսակը, նրա վրայ դեռ կար
ջերմանոցի վահա խոտը, բայց երեկոյեան նա
արդեն թառամեց: Ընդ սին երեսում է, որ
այդ համանման պսակների համար շատ շատ
գլուխներ կային և կան, և որ այդ պսակա-

զիրներից շատերը խաղառ մոռ ացուած՝ արբառ
մութեամբ քարշ են տալիս իրանց օրերը։ Ա-
մօթալի է թուռում մեզ համար ունայն սնա-
փառութիւնը։ Կամ թէ՝ մենք ձեռք ենք
ըերել գիտութեան որ և է նշանաւոր ճիւղ և
անուանուում ենք գիտնական։ Նորից հարց՝
ինչի՞ է պէտք այդ։ Զի՞ որ մեր գիտութիւնը
համեմատած ընդհանուրի գիտութեանց հետ՝
մի կաթիլ ջուր է ծովի մէջ։ Եւ ո՞քան ան-
կայուն, անհաստատ է այն ամենը, ինչ որ
մենք իւրացըել ենք։ Այն ահսութիւնները,
որոնք մենք ընդունել ենք որպէս ամենա-
ստոյդ՝ համարուում են շատ միակողմանի և
խախուտ, որոնց տեղ յետագայում բռնում
են ուրիշները։ Այդպիսով՝ ուրեմն, նրանք
ի՞նչ են տալիս մեզ։ Բայց նայեցէք. աշա-
այս կամ այն անձն, որ ոչինչ չէ խմանում
կամ չէ կամենում խմանալ, այնու ամենայնիւ-
ինչպէս զոհ է իրանով և ամեն բանով, ինչ-
պիսի երանական ժպիտ է խաղում նբա երե-
սին։ Եւ վերջապէս՝ ի՞նչ բան է չի՞նց ինքը
կեանքը, ինչացո՞ւ է նա։—Ես ապրում եմ
որպէս առանձին մի անհատ՝ ըստ երկոյթին՝
ինձ յատուկ առանձնայատկութիւններով։ Եւ
միրաւի՝ ես մի անհատ եմ ուրիշ միլիո-
նաւոր կեանքերի և անձնաւորութեանց շըր-
ջանում և շատ նման նրանցից շատերին և

Նրանք ամենքն ել շատ նման են միմանց։
Տեսար մէկին պատահեցար ոյնուհետեւ երկ-
բորդին և բացականչում եւ՝ «Հա, թուում է
թէ մենք ծանօթ ենք»։ Յայտնի շրջանում
ես որոշ տեղ եմ բռնում որոնում և գլու-
նում եմ ծանօթներ, որոնում եմ ինձ հետ
սրտով մտերիմներին։ Կոյնը հասուցանում
եմ նրանց և մասձում, իմ ներկայութիւնն
այստեղ անհրաժեշտ է և իմ բացակայու-
թիւնը մեծ կորուստ սիրահ համարուի։ Բայց
ահա հանդամանքները քշեցին ինձ մի այլ
հեռաւոր շրջան։ Խակոյն և եթ իմ տեղ
պատրաստի կանգնած են տասնետկ գործիչ-
ներ, որոնցից մէկն ու միւսն արգեն բռնել է
իմ տեղը։ Իմ ծանօթները շուտով գտան
իրանց համար նոր ծանօթ, և այն մարդիկ
որոնք իրանց սրտի գաղանքը բանում են
իմ տուած, արգեն ուրիշների առաջ են բա-
նում իրանց հոգին—սիրար։ Խակ ես բոլորո-
վին մոռացուած եմ ամենքից և նշանակում
է որպէս յայտնի և որոշ անձնաւորութիւն՝
ոչինչ եմ եղել, անպէաք եմ եղել։ Եւ ահա
կեանքի այդպիսի վերսափին գնահատութեան
և վերստուգութեան բոպէներում ի պատաս-
խանի այս հարցմունքին՝ «ի՞նչ է, ինչո՞ւ հա-
մար է այդ ամենը»—մեր կեանքը թուզում է
մեր առած որպէս փոշի, կորցնում է մեր

աչքում իւր բոլոր աքժէքն ու խմասալը, որպես մի գատարկ և յիմար կատակ, և մենք ակամայ կրկնում ենք հին խմաստունի ամենքին յայտնի խօսքերը՝ Աւնայնութիւն ու նայնութեանց, զի ամենայն ինչ ընդունայն է, ։ Այս ծանր են այդ բովէները: Սիրադ լցուում է անփերջ կարօտով, անհետանում է ամեն մի եռանդ. չափազանց ուժեղ կամք պէտք է ունենալ, որպէս զի հարկադրէ քեզ որ և է գործի կազիլ, երեալ հասարակութեան մէջ: Եւ հաստատապէս մնում է միայն մի ցանկութիւն՝ հեռանալ ամեն բանից և ամենքից, և որ զլխաւորն է՝ ինքն իրանից, այսինքն՝ կեանքից: Բայց այս ի՞նչ զրութիւն է: Այս մի տեսակ ցաւալի հետեանք չ' արդեօք ցնցուած և խորտակուած սրաի վշաթ: Արդ գեօք այս խելքի, մտածողութեան վերջին ծայր միակողմանի ուղղութեան հետեանք չ', որը յաճախակի աշխատում է, գտնել որ և է հիւանդոտ զուարձութիւն, որպէս զի կարողանայ գլորել և խորտակել ամենը, ինչ որ սուրբ է, և թանկագին, և բոլորի խորտակման մէջ տեսնել իւր ոյժերի երեան զալը և իւր որ և է, բանից անկախ լինելին արդեօք: Այս, այդ հիւանդոտ և անքնական զրութիւն է, և բարերազրարար, շատ գէպքերում արագ անցողական: Այնուամենայնիւ՝ նա յառաջա-

նում է ոչ պատմհական պատճառներից: Նա
ինքն ըստ ինքեան պայմանաւորում է այն
հարցը, որն սկսուել է մեր մասնողութեան
մէջ, որը մի առ ժամանակ մնացել էր անպա-
տասխան, առհասարակ մարդկային կեանքի
վերջին, վախճանական նպատակի հարցն է
այդ, որի մասին մտածելը դուրս է վանուում
մեր գիտակցութիւնից, առհասարակ, մաս-
նաւոր նպատակների երևոյթներով, որոնք
իրանց գոյութեամբ ոչինչ են, բայց և որին
հասնելու, ձգտելու համար ներկայումն ուղ-
ղում ենք մեր բոլոր ոյժերը: Մի և նոյն ժա-
մանակ մեր բանականութիւնը չի կարող բա-
ռականութիւն գտնել մասնաւոր, ժամանակա-
ւոր և չնչին նպատակների մէջ: Հասնելով
որոշ աստիճանի զարգացման՝ նա սկսում
է որոնել ընդհանուր և անսանց նպատակ-
ներ, որ մշտական լուսով լուսաւորէր ամբողջ
մարդկային կեանքը, որ մասնաւոր նպատակ-
ներին մի նշանակութիւն տար, ուղղելով
նրանց գէպի մի կէտ, որ ամենքին մօտեցնէր
ու միաւորէր իւր մէջ և իւրաքանչիւրին հը-
նարաւորութիւն տար ամրապէս և առանց
կանգ առնելու յառաջ ընթանալ և լուսաւոր
յոյսերով նայել ապագային: Եւ մինչդեռ այդ-
պիսի նպատակ չի գտնուած և ընդունուած,
մեղ համար մեծ թէ փոքր չափով, անխուսա-

փելի կը լինի, այն ծանր դրութիւնը, որպիս-
սին մենք նկարագրեցինք վերև։ Բայց այդ
օրինակ նպատակի մասին հարցն արդեօք բա-
նականութեան համար մի դատարկ հարց չէ,
որ ընկնում է ողարապ վերացականութեան
մէջ, որ անջատուում է խկական կեանքից և
ամենօրեայ խնդիրներից։ Ոչ, այդ մտածո-
ղութեան և կեանքի արմատական և օրհա-
սական հարցն է, առանց որի վճռի և որի
հեռանալով՝ միտքը շղթայուում, թուլանում
ու փոքրանումէ, և կեանքը դառնում է այդ-
պիսով անասնական և ոչ մարդկային գիտակ-
ցական կեանք։ Աւսոի և մարդկային կեանքի
վերջին նպատակի մասին եղած հարցը ամեն
ժամանակ վճռել և այժմ էլ վճռում է
մարդկութիւնը, և այդ մասին բաւական թուով
վճիռներ է տուել։ Մեզ զբաղեցնող հարցը
մարդկային կեանքի համար անչափ կա-
րեոր լինելով, միենոյն ժամանակ պատկա-
նում է և ամենադժուարների թուին։ Այս է
պատճառը, որ այդ հարցն այնքան բազմա-
զան վճիռներ ունի, որոնք տեսականի կողմից
անբաւարար են և ցաւալի ազգեցութիւն ու-
նին իրական և գործնական կեանքի վրայ։
Ծանօթանանք այդ վճիռներից մի քանիսի
հետ, օրինակ այնպիսիների, որոնք ըստ իրանց
տարածման այս կամ այն ժամանակում և

ըստ իրանց փոխադարձ ազդեցութեան՝ մարդկանց կեանքի և գործունեութեան վրայ, կառող են համարուել, և իրօք համարուում են ամենից նշանաւորները։ Կեանքի նպատակի մասին հին վարդապետութիւններից նշանաւոր են և ուշագրութեան արժանի Հընդկաց և Յունաց վարդապետութիւնները, որոնց վրայ և մենք ամենից առաջ կանգ կառնենք։

III

Հնդկաց վարդապետութիւնը կեանքի նըպատակի մասին, կցորդուած լինելով առ հասարակ հնդկական աշխարհատեսութեան հիմնական դրութեանց հետ, հետեւեալն է։ Յիրաւի՝ ճշմարտապես գոյութիւն ունի միայն Բրահման, այն մեծ Հոգին, որ միակ և յաւիտենական է, անըմբոնելի և անտեսանելին առանց որ և է մեծութեան և չափի և առանց որ և է յատկութեանց։ Հոգի՝ որի մեջ չըկայ ոչ առաքինութիւն, ոչ մոլութիւն և ոչ գիտութիւն, որը նման է ջինջ տարածութեան, որի մեջ ոչինչ չըկայ, և որը ամենամեծ դատարկութիւնն է։ Այդ Հոգու գոյութիւնը միայն և եթ ճշմարիտն է և իսկականը։ Ինչ որ վերաբերումէ աշխար-

Հին, որ շըջապատած է, մեզ, ոչ մտածող
մարդկանց միայն թուում է որպէս գոյու-
թիւն ունեցող: Եւ յիրաւի՝ աշխարհս, որ
անկայուն է և անշարժ, ունի գոյութեան
մի ձեւ, նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կրկնե-
րկոյթ, ջրի մի տեսիլք անջուր անապատում:
որ զրաւում է դէպ իրան անցորդին: Նոյն-
պիսի մի ցնորք է և իւրաքանչիւր առանձին
էակի կեանքը, ընդ նմին և մարդկային կեան-
քը: Նա մի խաղ է, մի ցնորք, ունայնու-
թիւն և ոչնչութիւն: Մահկանացուի օրերն
անհետանում են, որպէս ջրի դողդոջուն կա-
թիլը լուսոսի տերեկի վրայ, որպէս հեղուկի
որ չորանում է տապից: Որովհեան կեանքը մի
տեսիլք է, ուստի և անկատարելութեան և
տագնապների աղբիւր է: Ով ապրում է, նա
չի կարող չը տանջուել, բայց այն՝ ինչ որ
մարդու մեջ գլխաւորապէս դառնում է չա-
րութեան աղբիւր, այդ միայն նրա տնձնա-
կան «եսն» է, որ ձգտում է դէպի առանձ-
նութիւն և կոիւ է մղում իւր անկախ
կեանքի համար: Եսը բոլոր կրքերի աղբիւրն է:
Նա հեռացնում է Մարդուն Աստուածանից,
միակ ճշմարիտ աստուածային կեանքից, աշ-
խատելով յետ կասեցնել այն ցնորական գո-
յութիւնը, հաստատել նրա դէպի Աստուա-
ծութիւնը եղած յարաբերութեան ան-

կախութիւնը, որը ծշմարիտ դոյութիւն է:
Աշխարհում գանուող հենց այդպիսի ցնորբ-
ների տեսակէտից՝ մարդկային կեանքի վեր-
ջին նպատակն է և պէտք է լինի՝ ի մի ձռւ-
լութիլ միակ և յաւիտենական իրական էու-
թեան հետ, այն նմանութեամբ, ինչպէս որ
կաթիլը ձուլուում ովկիանոսի հետ, և ձու-
լուելով՝ անհետանում է անդառնալի կեր-
պով յաւիտեան կորցնելով նրա մէջ իւր ե-
րեակայական անկախութիւնը։ Ամենից ուղիղ
և միակ ճանապարհը դէպի այդ նպատակը հե-
տեւեալն է. ոչնչացնել իւր մէջ դէպի աշխար-
հը ձգտող ամեն մի երկոյթ և բոլորովին մո-
ռացութեան տալ նրան. սպանել իւր մէջ
միտքը, ցանկութիւնը և ամեն տեսակ զգա-
ցումն։ Միանգամ որ հասար դրան, հասած
ես և կեանքի նպատակին։ Այստեղից հետե-
ւում է, որ ծշմարիտ իմաստունը նա է, որ
կանգնած է իւր էութեան վախճանական նպա-
տակի առաջ, ով որ իրանից ոչ առաջ ու
յետոյ, ոչ յաջ ոչ յահեակ ովինչ չէ տեսնում
և ոչ մի բանով չի յուզուում, չի հետաքրքր-
ւումի ով չի զգում ոչ զայրոյթ, ոչ քաղց և
ոչ զրկանք, ով ազատ է անկախութեան զգա-
ցումից, ոչ բարութիւն է, ոչ չարութիւն,
որ միակերպ անտարբերութեամբ է նայում իւր
որդկերանց վրայ, ինչպէս և վայրենի գաղան-


ների վրայ։ * Այսպէս է Հին և ժամանակա-
կից հնդկացիների վարդապետութիւնը մարդ-
կային կեանքի վախճանական նպատակի մասին։
Բայց արդեօք զոհացուցիչ է այն։ Ընդունակ է,
արդեօք հասկանալ կեանքը և հասկանալով
հանդստացնել և ուրախացնել մարդկային սիր-
ար, առաջ առողջութիւն և կամքին ե-
ռանդ։ Ո՞չ, ո՞չ ընդհակառակն՝ նա մարդկային
կեանքը դարձնում է անհպատակ և խլում է,
նրանից ամեն մի ուրախութիւն։ Եւ յիշաւի՝
եթէ մարդու կեանքը, ինչպէս առանձին էակ,
մի խաղալիկ է (ֆանտոմ), երեակայութիւն է,
այն ժամանակ, չենց այդ պատճառով է, և
նա ոչ մի նշանակութիւն չունի, և այդ նշա-
նակութիւնը ոչ ոք էլ հնարաւորութիւն չու-
նի տալ նրան։ Եթէ, կեանքը ցնորք է, ուստի
նա չի կարող ունենալ ոք և է խելացի նպա-
տակ, ասպա ուրեմն և այդ նպատակի հետ կա-
պուած ամեն մի խորհրդածութիւն ոչ այլ ինչ
է, եթէ, ոչ՝ մի գատարկարանութիւն։ Այնու-
հետեւ եթէ գիտակցութիւնը ինքնաճանաչու-
թիւնը և զգացմունքը ծառայում են որպէս
աղբիւը անկատարելութիւնների և տանջանք-

* Քրիստոն։ Հին աշխարհի կրօնները քրիստոնեա-
կանի համաւատութեամբ I. երես 203-209. 245-250
308-309.

ների, որպէս աղբիւր չարութեան, այն ժամանակ պարզ է, որ քանի որ մարդս այդ կարողութիւններն ունի, մաքուր և հաստատուն ուրախութիւնները նրան անմատչելի են: Վարդապետութիւնն առում է, որ մարդս պէտք է մեռցնէ և վերջապէս սպանէ ինքն իր մէջ ամեն մի միտք, զգացողութեան ամեն մի շարժում: Այդպիսի գէպքում նա չի կարող հաշուի առնել ուրախութիւնը և ապագայումն ըստ որում գիտակցութիւնից և զգացմունքների աշխարհից դուրս՝ մեզ համար անհնարին է դառնում: մինչեւ իսկ աներևակայելի, որ և է ուրախութիւն: Այսպիսով Հնդկաց վարդապետութիւնը մարդկային կեանքի վախճանական նպատակի մասին՝ խլում է, այդ կեանքից այն ամենը, ինչ որ նրա արժեքն է կազմում: ոչնչացնում է այն ամենը, ինչից յօրինուած է. և աւելի լաւ կլինէր, եթէ այդ վարդապետութիւնը բոլորովին զոյութիւն չունենար: Բայց նա սկիզբն առաւ Հնդկաց մէջ, որոնք իւրացրին այն և մտցրին կեանքի մէջ, և որը կարելւոյն չափ, գարերի ընթացքում իւր գործը կատարեց: Հնդկացիք գոյութիւն ունին ցարդ ևս, կեանքի նպատակի մասին ունեցած նրանց վարդապետութեան գործնական եղբակացութիւնը ամենքի աչքի առաջ է դրուած և այդ եղբա-

կացութիւնների հիմն վրայ խղճալի կերպով
Ճնշուում՝ է մարդու սիրտը։ Աշխարհիս ամեն-
աբարեբեր երկիրը Հնդկացուն բաժին ընկաւ,
բայց նրա բաժինն այստեղ աւելի տխրալի է,
քան աշխարհիս երեսին մի որ և է թշուառ
երկը չքաւոր բնակչի բաժինը։ Հիանալի է
իւր բազմասեսակութիւմք արտասովոր գե-
ղեցիկ բնութիւն է շրջապատել Հնդկացուն.
բայց նրա հողին մնում է փակ արտաքին
աշխարհի թարմացնող և ամիսուժացնող ազ-
դեցութիւնների առաջ և մշտական կարօտի
անջնջելի կնիքը դրուած է նրա ամբողջ գո-
յութեան վրայ։ Անսպառելի հարստութիւն է
ցրուած Հնդկական հողի մակերեսոյթի վրայ
և թագնուած է նրա խորքերում և նրա
ամենահին բնակիչը, ըստ մեծի մասին, աղ-
քատ է և թշուառ։ Եւ չնայելով հողի ար-
տասովոր արտադրութիւններին՝ յաձախ մեռ-
նում է սովից։ Եւ վերջապէս Հնդկացին
չէ պատկանում վատթարածին ցեղերի շար-
քին, որոնք ստոր են կանգնած մարդկային
ազգի միւս ցեղերից։ Ընդհակառակն՝ Հնդկաց
ցեղը պատկանում է աշխարհի երեսին ամե-
նից ընդունակ ազգերի թուին։ Բայց կեանքի
ունայնութեան մասին ունեցած մտածողու-
թեան և մարդկային կեանքի դպրութեան անկա-
խութիւնը որպէս ցնորք տեսիք ընդունելով՝

960-2013 (5124) 38



նրա ոյժն այլ ևս չի գործում, թմբում են նրա
հոգեօր ոյժերը, և այդ երկնքի աստղերի չափ
բազմաթիւ ազգը կորագլուխ հպատակու-
թեամբ, որպէս բանւոր անասուն, խոնար-
հեցնում է իւր զլուխն ու թիկունքը մի
բուռն աներես և անկուշտ եկուորների առաջ,
և մեռելային անտարբերութեամբ նայում է,
թէ ինչպէս այդ եկուորները կեղեքում են իւր
մայրենի երկը գանձերը: Եւ յոյս չկայ դեռ,
թէ շուտով կզարթնեն այդ մեծ ազգի մեծա-
մեծ ոյժերը:

IV

Յունաց վարդապետութիւնն ասում է.
«Ամեն ինչ գեղեցիկ է, տիեզերքի մեջ: Գեղե-
ցիկ են աստուածները, Ոզիմազոսի այդ բնա-
կիչները: Նրանց կեանքը ինքնուրոյն մարմնե-
ղէն նիւթի և հոգու ուժեղ կորովի մի հրաշա-
լի ներդաշնակութիւն է: Կեանքի չարութեան
մասին նրանք տեղեկութիւն չունին: Իրաւ է,
աստուածներին էլ օտար չեն թշուառութիւ-
նըն ու վիշտը, նրանք էլ միմեանց դէմ պա-
տերազմ ու մարտ են մզում, բայդ այդ բո-
լորովին նման չէ կատաղի կոռիւ, այլ միայն
ընտանեկան վիճաբանութիւններ, որպիսիք
յաճախ վերջանում են այն անպատճելի կա-

տակով — ծիծաղով, որն աւելի ապացոյց է
նրանց պարզամտութեան և անխռովութեան։
Գեղեցիկ է մեզ շըջապատող աշխարհը. ամեն
ինչ նրա մէջ աստուածային է, ուրախ, ներ-
դաշնակ, և իբրև մի ամրողջութիւն վերց-
րած՝ մարմնացած գեղեցկութիւն է։ Գե-
ղեցիկ է մարդը, որ տիեզերքի մի մասն է,
ընդ նմին ինքն էլ մի փոքրիկ տիեզերք է,
որի մէջ պարունակուում է այն ամենը, ինչ
որ ամենալաւն է աշխարհի մէջ։ Մարդու
ներքին աշխարհում չկայ երկպառակութիւն,
ևս առաւել չկայ այնպիսի մի բան, որ յի-
շեցնէր հոգու և մարմնու, զգայականի և գերբ-
նականի մէջ եղած տարածայնութիւնը, որպէս
համանման երկպառակութիւն չըկայ նոյն իսկ
Աստուածութեան մէջ։ Այդ ներդաշնակու-
թիւնն անկարող են վրդովել նոյն իսկ կեան-
քի վիշտն ու նեղութիւնը։ Հնաց այդ վշտերն
են, որ օգնում են միայն երեան հանելու,
ըստ ամենայնի լիակատար կերպով, մարդ-
կային հոգու գեղեցկութիւնն ու վեհութիւ-
նը։ Տիեզերքի մէջ երբ թագաւորում է գե-
ղեցկութիւնն ու ներդաշնակութիւնը, այն
ժամանակ երկպառակութիւն չըկայ ոչ մարդու
և նրան շըջապատող աշխարհի, ոչ էլ մարդու
և աստուածների մէջ։ Աստուածները մարդ-
կանց բարեկամներն են, և չկայ նրանց մէջ

անանցանելի միջնորմն։ Եւ եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուրախութիւն, իսկ կեանքի նպատակը՝ զուարձութիւն։ Զսիրել կեանքը, չզմայլել նրանով, նրա բարիքներով, նշանակում է աստուածանարդ լինել։» Ահա այդպէս էր ուսուցանում հելլենացին, որոշելով մարդկային կեանքի նպատակը։ Գեղեցիկ և գրաւիչ է այդ վարդապետութիւնը, պայծառհանդարտութեամբ և անխուսի ուրախութեամբ է շնչում, բայց ընդ նմին և վերջին ծայր թռուցիկ և միակողմանի է. շատ բան կեանքի մէջ մնում է իրրել մի անբացատրելի հանելուկ, ուստի և նրա սնանկութիւնն ակներել է նոյն իսկ փոքր հայեացք ունեցողի համար։ Ի հարկէ իրաւացի է, որ շատ բան կայ գեղեցիկ տիեզերքի մէջ, բայց և գեղեցկութեան հետ կան նոյնպէս և շատ այլանդակութիւններ, ներդաշնակութեան շարքում կայ և անկարգութիւն։ Այն ևս ուղիղ է, որ մարդու մէջ կան շատ բարի և բարձրագոյն ձգտումներ, բայց քիչ չեն և չար ու ստոր ձգտումները, որոնք յաճախակի երեալով՝ պարզօրէն վկայում են աշխարհումն գոյութիւն ունեցող բարոյական շարիքի մասին։ Աւղիղ է և այն վերջապէս, որ կեանքի մէջ պայծառ բոպէներ ու ժամեր

կան և ըստ երևոյթին կարելի է կազմակերպել մի ուրախ, պայծառ և անդորր կեանք, բայց չխօսելով արդէն իւրաքանչիւր քայլափոխում՝ պատահող ընտանեկան վշտերի մասին, միայն անխուսափելի, անողորմ և խորհրդաւոր մահուան տեսիլը ընդունակ է նսեմացնել իւրաքանչիւր ուրախութիւն և խոռվել իւրաքանչիւր անդորր հանգստութիւն։ Եւ Յոյնը, որքան էլ գեղեցիկ լիներ աշխարհը նրա հայեացքով, չեր կարող ուշադրութիւն չդարձնել կեանքի այդ վրդովող միւս երեսի վրայ և յիրաւի՝ նա ուշադրութիւն դարձրեց, մանւաւանդ այն ժամանակ, երբ արդէն լրացել էր նրա պատմութեան ծագկեալ շրջանը, երբ նրա նահապետական մաքուր ու խիստ բարբերն ու սովորութիւններն աւանդութեանց կարգն անցան, և երբ հասարակական շահերը զոհուեցին անձնական եսական շահերին։ Եւ որքան Յոյնի ձգտումն աւելի էր զարգացած դեպիներդաշնակութիւնը և վայելցութիւնը, այնքան նրան աւելի էր սարսափեցնում չարիքը և իրականի անհամաձայնութիւնը երևակայականի հետ։ Ուստի և Յունաստանի հանձնարեղ գրողների արտադրութեանց մէջ մենք պատահում ենք գեղեցկութեան օրհներդութիւնների, կեանքի ուրախութիւնների և մարդկային հողւոյ բարձրագոյն յատկու-

թիւների նկարագրութանց շաբքում և տը-
խուր ողբերգական ձայնանիշներ, լսում ենք
գանգատաներ կեանքի մասին, նրա ուրախու-
թիւնների ունայնութեան մասին, մարդ-
կային բնութեան ապականութեան մասին:
Խոր վշտի արտայայտութիւնից հեռու չեր նոյն
խակ Հոմերոսը, որի նկարագրութիւնների մէջ
ճակատամարտները նմանում են ինչպիքների,
խակ խնջոյքներն այնքան Ճոխ և ուրախ են
երեւում, որ նրանց նախանձում էին նոյն
խակ Ողիմգոսի աստուածները: Հոմերոսի Խ-
լիականի մէջ պատահում են, օրինակ՝
այսպիսի դասնութեամբ բացականչութիւն-
ներ. «Ամենազօր աստուածները վիճակել
են մեզ թշուառ մարդկանց երկրի վրայ
ապրել նեղութեամբ»: Յունաց աւելի յետագայ
գրողների, մանաւանդ՝ ողբերգուների երկերի
մէջ, նման ողբեր, գանգատներ աւելի յաճախ
են պատահում և յաճախ գրուում են առա-
ջին տեղը: Այսպէս՝ Առքոլլէսի Հղիպոսի մահը՝
ողբերգութեան մէջ մենք հանդիպում ենք
հետեւալ կառրին. «Երանի, թէ չեիր ծնուել,
ովմարդ, —ահաւասիկ մէծ և նշանաւոր խօսք —
բայց երբ արդէն լոյս տեսար, ճշմարիս՝ ամե-
նից լաւն այն էր, որ ըստ կարելւոյն շուտով
գնայիր այնաեղ, որտեղից եկել ես դու: Զե՞ն
ալեկոծում մեզ արդեօք այլ և այլ ճախոր-

դութիւններ, օրինակ՝ սպանութիւն, վէճր
արիւնչեղութիւն, կոխու, քէն, նախանձ: Բայց
վերջ ի վերջոյ սպասում՝ է, դաժան, միա-
կերոց, ցաւագար և զաւամեալ ծերութիւնը,
որ ամեն կողմից շրջապատուած է, ձախորդու-
թիւններով: Բայց վիշտն ու թախիծը հին
Յունաց գրականութեան մէջ մենակ բանա-
ստեղծական ձիւղի առանձնայտկութիւնը
չեն կազմում: Յունական պլաստիկական գեղա-
հրաշ ստեղծագործութիւններն անդամ՝ կը-
րում էին զզալի զզացմանց կնիքը: Յունական
վաղեմի քանզակագործների արտադրութիւն-
ների մէջ այդ ախուր զզացմունքն արտայայտ-
ուում է, խիստ անկենդան և ձակասագրին
հլու հնագանդ անդորրութեան մէջ: Ինչ
վերաբերում է յետագայ արտադրութիւն-
ներին, այսաեղ նոյն խակ այնպիսիների խաղաղ
ու գեղեցիկ գէմքերի վրայ, որոնք կասես
հէնց ապրում են միայն կեանքի և զուար-
ծութեան համար, դրօշմուած է որ և է
բողոք, գաղտնի կարօտ: Ընդհանրապէսնրանք
արտայայտում են այն ներքին ծարաւի նշոյլը,
որը երբեմն տանջում է մեզ մեր կենսական
լիակատար վայելչութիւնների ժամանակ, գեղե-
ցիկ, բայց կարճատե գոյութեան միիջոցին,
այն է՝ մշտական ծարաւ դեպի ինչ որ բարձր,

գեսլի երկնայինը ^{4:} Յայց ի՞նչ են ապացու-
ցանում այդ տիուր ձայնախաղերը, այդ տիուր
դժերը յունական բանաստեղծութեան ան-
մահ ստեղծագործութիւնների և քանդակա-
գործութիւնների մէջ: Նրանք պայծառ վկա-
ներ են իրանց այն վարդապետութեան ան-
կարողութեան մասին, թէ ամեն ինչ աշխար-
հում գեղեցիկ է, թէ կեանքը ուրախութիւն
է և թէ կեանքի նպատակը՝ աշխարհի
բարիքների վայելութիւնն է: Նրանք որպէս
կշտամբանք այդ վարդապետութեան, բարձրա-
ձայն յայտարարում են, թէ կեանքը իր
վախճանական նպատակով Յոյնի համար ինչ-
պէս եղել է, նոյնն է մնացել յաւետ՝ որպէս
անլուծանելի, չարատաննջ մի հանելուկ:

V.

Դարեր են անցել այն օրից, երբ Հնդկա-
ցիք և Յոյները մշակել են իրանց հայեացքները
մարդկային կեանքի վախճանական նպատակի
մասին, և այդքան երկար ժամանակամիջոցում
առաջիններին յաջողեցաւ, թերես ընդ միշտ
հոգեպէս քնել, իսկ վերջինները վաղուց է
արդէն վերջնականապէս իջել են պատմութեան

1. Կարրիեր՝ Արուեստը և Արա կապը բաղամակր-
քուրեան ընդհանուր զարգացման հետ և մարդկուրեան
իդեալները. II • երես՝ 214, 215, 318, 319.

բեմից։ Բայց հարց է. «Ո՞րն է, մարդկային կեանքի վերջին նպատակը։» Այդ հարցը ցարդես մնում է խիստ հետաքրքրական։ միշտ էլ վճռուում է նորից, միշտ նորից։ Ժամանակակից լուծումներից գլխաւորագես երկուսը դրաւում են առանձին ուշադրութիւն։ Այդ լուծումները պատկանում են յուղեպեսունեան (Պեսսիմիզմ) և սուսնիպարիում։

Յունետեսութիւնը ուսուցանում է. «Մեր աշխարհը յոյժ անգոհացուցիչ է։ Այդ բանը հաստատում է, անաչառ վերլուծութիւնը (անալիզ) որը կատարուում է աշխարհումն ընդհանրագես և մարդկային կեանքի մէջ մասնաւորագես։ Աշխարհումն առաջին տեղն է բանում՝ տանջանքը և տիրապետում է առաւելագես անբաւականութիւնը։ Իրաւ է՝ մարդիկ խօսում են ուրախութիւնների մասին, ձգտում են դէպի բաղդաւորութիւնն, մատնանիշ են անում՝ բազմաթիւ բաւականութիւններ և վայելչութիւններ։ Բայց այդ ուրախութիւններն ուրադդաւորութիւնը լոկ միայն ցնորք են և խարուսիկ յոյս։ Եւ յիրաւի՝ այդ երեակայական աղբիւրները ծնում են միայն դառնութիւն ու վիշտ։ Ուրախութիւնների աւելի մատչելի և դրաւիչ աղբիւրներ կարելի է համարել սէրը, ընտանեկան կեանքը և բարեկամութիւնը։ Բայց իրօք ի՞նչ են տապիս

նրանք բացի հիսութափման և հոգսերի տան-
ջանքներից։ Սէրը վաղ զարթնելով և բաւա-
կանութիւն չըդտնելով՝ պատճառումէ վշտա-
գին անհանգստութիւն։ Սէրը, երբ ասօրինի
ձանապարհով է բաւականութիւն դանում,
ունենում է ամենացաւալի հետեանիքներ,
և վերջապէս սէրը ամուսնական կեանքի մէջ
պատճառ է դառնում ծանր զղջման, և միայն
հազուագիւտ, ամենաբաղդաւոր դէպքում
փոխուումէ բարեկամութեան կամ աւելի ճիշտն
ասած՝ սովորութիւն է դառնում։ Բայց այդ
արդէն սէր չէ, և արդեօք նրա մէջ շատ ու-
րախութիւն կայ։ Ամուսնութեան մէջ զուար-
ծութիւնների աղբիւր համարուում են զա-
ւակները։ Յիրաւի զաւակները ծնուելով ու
մեծանալով՝ ուրախացնում են ծնողներին։
Բայց այդ ուրախութիւնները համեմատելով
այն մեծամեծ վշտերի հետ, որոնց տոկում—
կրում են ծնողները, զլխաւորապէս մայրերը՝
կորյնելով իրանց զաւակներին, համեմատելով
այն անընդհատ ծանր հոգսերի հետ, որոնք վե-
րաբերում են նրանց ապրուստին, կրթութեան
և մեծացող նոր սերնդի բարդաւաճման, բազ-
մաթիւ դէպքերում ծնողների իրենց որդւոց
վրայ դրած յոյսերը չեն արդարանում։

Համարեա ամենքն էլ որոնում են բա-
րեկամութիւն ու բարեկամներ, և գտնելով

ուրախանում են: — Սակայն ի՞նչ է այդ որոշումների գաղտնի շարժառիթը: — Մարդութուլութեան գիտակցութիւնը և ուրիշի մէջ նեցուկ գտնելու ցանկութիւնը: Այստեղից հետեւում է, որ զօրեղ մարդիկ բարեկամների կարիք չեն զգում: Բայց և անձնական թուլութեան գիտակցութիւնը դառն գիտակցութիւն է, որով թունաւորուում է բարեկամութեան քաղցրութիւնը: Ընդ նմին բարեկամութիւնը պահպանուում է բարեկամների ընդհանուր շահերով, և նրա մէջն է բարեկամութեան անյարատեւութեան պատճառը: Բայց ահա առաջ է գալիս շահերի տարրերութիւնը, բարեկամութիւնը սառչում է, և փոխուում նոյն իսկ թշնամութեան: Հետեւանքը լինում է հիասթափութիւն: Նոյնը կարելի է ասել և մարդկային ուրախութիւնների միւս բոլոր աղբւըների մասին՝ վառքի իշխանութեան, նիւթական բարեկեցութեան և այլն: Եւ այդ պղտոր ակներում թուուցիկ ուրախութիւնների թուում մարդուս պատահում է, առաւելապէս վիշտն ու տանձանքը: Կայ սակայն մի աղբւըր, որից կարելի է աւելի ուրախութիւններ քաղել, քան վշտեր: Նա նման է անապատի ովազիսի որին վերջապէս հասնում է յոզնած ձառնապարհորդը: Այդ՝ մարդկային ունայնու-

թեան և տանջանքների խաւարի մէջ՝ ուրա
խութեան լուսոյ մի ճառագայթ է։ Այդ աղ-
րիւրն է արուեստն ու գիտութիւնը։ Բայց
ում է մատչելի այդ աղբիւրը։ Մարդկանց
մեծամասնութիւնը չունի ոչ ընդունակու-
թիւն, ոչ էլ կոչումն, որ նրանից մի օգուտ
քաղէ և այդ մեծամասնութեան համար,
կասես, նա բոլորովին գոյութիւն չունի։ Համե-
մատարար սակաւաթիւ են այն անհատները,
որոնց յաջողուում է թափանցել գեղարուես-
տի և գիտութեան գաղտնիքի մէջ, նրանք էլ,
ըստ երևոյթին, հետեւում են ներքին ձգո-
ղութեան, որոնց նշանաւոր մասն էլ իրակա-
նապէս չունի այդ ներքին ձգողութիւնը այլ
առաջնորդուում է միայն կողմնակի ենթադր-
բութիւններով ու շարժառիթներով՝ — ապա-
գայում ձեռք բերելու համար արդիւնաւետ-
պաշտօն, վայելու զիրք, յարդանք ու փառք,
հարկը պահանջած դէպքում՝ իր ընկերների
շրջանում արտաքուստ փայլելու ցանկու-
թեամբ։ Եւ այդպիսի մարդկանց համար ու-
րախութիւնները, որոնք ձեռք են բերուում
գեղարուեստական ծաշակով ու գիտութեամբ։
բոլորովին օտար են։ Ապա ուրեմն մնում են
միայն մի բուռն ճշմարիտ գեղարուեստագէտ-
ներ ու գիտուններ — գեղեցկութեան ու գի-
տութեան ստեղծագործողների սահմանում —

որոնք երկար նախապատրաստումից յետոյ՝
վերջապէս ընդունակ են դառնում այդ պայծառ
ակից փառաւոր ուրախութիւնները ստանալ:
Բայց ի՞նչ են այդ ուրախութիւնները ըստ
քանակութեան մարդկային կեանքի տանջանք-
ների բազմութեան հետ համեմատելով: —
Ոչինչ: — Եւ հետեապէս ուղիղ է, որ վիշտն
ու տանջանքները առաջին գծի վրայ են դը-
րուած աշխարհումն, և իսկապէս՝ միայն
նրանք գոյութիւն ունին: Բայց ի հարկէ՝
աւելի լաւ է չտանջուիլ քան տանջուիլ,
և որովհետեւ տանջանքն անքակտելի կերպով
շաղկապուած է կեանքի հետ, նրա գոյու-
թիւնն — էութիւնն է կազմումն ուստի և լաւ
է չապրել քան ապրել: Ապա ուրեմն կեան-
քի միակ և միակ ինելացի նպատակը կարող է
լինել միայն այս՝ ձգտել ոչնչացնել կեանքը և
առհասարակիւրաքանչիւր գոյացութիւն: Մյուն
նպատակն իրագործելու համար իւրաքանչիւր
մարդ կեանքի մէջ պէտք է գործնական մաս-
նակցութիւն ունենայ, նպաստելով մարդկու-
թեան մուաւոր յառաջաղիմութեան, մինչև
վերջապէս մարդկանց մեծամասնութիւնը ակ-
նարկած նպատակի ինելացիութեան մէջ կըհա-
մոզուի: Մի անգամ որ այդպիսի համոզումն
հաստատուեցաւ մարդկութեան մէծ մասի
գլխումն նրանք յօժարակամ կկարծեն իրանց

կեանքը, որ թերեւս հետևանք լինի առհաս-
սարակ իւրաքանչիւր էութեան ոչնչացման:
Այն ժամանակ կըհասնէ, ամեն տանջանքի վախ-
ճանը, և հետևապէս վրայ կըհասնէ այն, ինչ
որ լաւ է տանջանքից¹»:

Ի՞նչ կարելի է ասել մարդկային կեանքի
նպատակի վերաբերեալ այս նոր յոռետեսու-
թեան (пессимистическомъ) վարդապետութեան
մասին: Հենց առաջին իսկ ընդհանուր ծա-
նօթութիւնից յայտնի կերպով մարդու աչքին
է ընկնում նրա նմանութիւնը հին հնդկական
վարդապետութեան հետ, որի վրայ, իրեւ
սնանկացածի, վաղուց և արդէն իր դատա-
վճիռը կարդացել թէ: Փիլիսոփայական միաքը
և թէ պատմութիւնը: Մանրամասնօրէն քըն-
նութեան առնելիս, դարձոր փորձերի և
մարդկային կեանքի վկայաբանութիւնների հետ
համեմատելով՝ երեան են դալիս բազմաթիւ-
սուր հակասութիւններ ձշմարիտ փաստերի
դէմ: Ամբողջ մարդկութեան համար ամեն
ժամանակ և ամեն տեղ կեանքը, գոյութիւնը,
ընդհանուր առմամբ, ամենամեծ բարիքն է
համարուել. իսկ յոռետեսութիւնը հաստա-
տում է, որ չգոյութիւնը, ոչնչութիւնը լաւ
է գոյութիւնից և կեանքից: Զարութիւնը

միշտ համարուել է, և համարուում է, կեանքի մէջ անբնական երևոյթ, որի հետ անհրաժեշտ է, մարտնչել և որի հետ յիրաւի մարտընչում են և յաճախ փառաւոր յաջողութեամբ։ Բայց յոռետեսութիւնը ապացուցանում է, որ ի զուր և անհնարին է շարութեան հետ մարտնչելը, որովհետեւ չարութիւնը արմատացած է հենց իրան՝ գոյութեան մէջ, որն իր էութեամբ իսկական չարութիւնն է, ուստի և չարութիւնն ամբողջովին կրվերանայ միայն այն ժամանակ, երբ վերջանայ ամեն մի կեանք։

Մարդկութիւնը գիտեր և գիտէ այնպիսի ուրախութիւններ, որոնց թուում և այնքան մաքուրն ու բարձրը և այնքան ճշմարիտը, որ նրանց գոյութեամբ տանելի են համարուում նոյն իսկ ընտանեկան ամենածանր ձախորդութիւնները։ Այդպէս օրինակ այն ուրախութիւնները, որոնք բղխում են պարտաձանաչութեան գիտակցութիւնից, մաքուր խղզից և այնպիսի յարաբերութիւններից, որոնք հիմնուած են անշահասէր և բարեացակամ սիրոյ լրայ։ Բայց յոռետեսութիւնը ուսուցանում է, որ աշխարհումն կայ յիրաւի միայն դառնութիւն ու վիշտ, իսկ ուրախութիւնները, որոնց մասին ընդհանրապէս խօսում են և որոնց ձգտում են, միայն

ցնորքներ են, և մարդիկ ուրախանալով՝ խառըում են իրանք իրանց։ Ոչ մի բան այնքան ցաւալի չէ և այնքան զօրեղ չէ եղծում առհասարակ մարդուն, որքան դոյութեան ընդհատումը։ Մահուան երեսոյթները և կենդանի ստեղծուածների ոչնչացումը, ըստ մեծի մասին, ձնշող կերպով են ներգործում մարդկային բնութեան վրայ. և մենք առաջնորդուելով անմիջական զգացումով՝ այդ երեսոյթների մէջ տեսնում ենք մի ինչ որ անբնական և զարհութելի բան. բայց ժամանակակից յուսահատութեան փիլիսոփայութիւնը (փարզապետութիւնը) քարոզում է, որ ոչ թէ գոյութեան ոչնչացումը, այլ ընդհակառակն՝ հէնց ինքն գոյութիւնն է անմիտ երեսոյթ։ Եւ վերջապէս մարդկային կեանքի վախճանական նըսպատակի հետ անխուսափելի կերպով կապուած է մի զբական երեսոյթ, որով մեր կեանքը պէտք է զառնայ աւելի կատարեալ և աւելի ուրախ և ստանայ մեր աչքում այնպիսի նշանակութիւն, որպիսին նա ցարդ չէ ունեցել։ Բայց յուետեսութիւնը մատնանիշ է անում մարդկային կեանքի վախճանական նպատակի ըստ ամենայնի կատարեալ բացասական կողմի վրայ, նոյն այդ կեանքի ոչքնչացման վրայ առանց մնացորդի։ Աակայն որքան որ հակաբնական է, և ոչ խելացի յուե-

տեսութեան վարդապետութիւնը մարդկային
կեանքի վախճանական նպատակի մասին, նոյն-
քան էլ բազմաթիւ հետեւողներ ունիւ Բայց
այդ մարդիկը չեն ձգառում դէպի գործու-
նեութիւն, չեն մտածում մարդկութեան
մտաւոր զարդացման մասին, որպիսին կրցան-
կանար յոռետեսը: Խնկնասիրութեան հիւան-
դու զարդացման և կամքի թուլութեան հետ՝
նրանք ընդ նմին անտարբեր են դէպի ամեն
կենդանի գործ և անընդունակ մարտնչելու
կեանքի ձախորդութիւնների դէմ: Եւ շատե-
րը նրանցից, որոնք ամենից անկեղծն են և
հետեւզական, սովորաբար հանգում են ար-
խուր վախճանի՝ բռնի կերպով վերջ տալով
իրանց կեանքին, և հակառակ յոռետեսութեան
հրահանգութիւններին՝ չափասելով ընդհանուր
մարդկութեան լաւագոյն մասի համաձայնու-
թեանը: Եւ յոռետեսութեան վարդապետու-
թեան այդ տիսուր պառազներն ամենից աւելի
ակներեւ ապացուցանում են նորա մեծ անձը
տութիւնը:

Համաձայն ուտիլիտարիզմի վարդապետու-
թեան * իւրաքանչիւր մարդ խորշումէ տհա-

* Բենտամլի վարդապետութիւնը, որ այն օ-
բեկներն է միայն իրաւացի համարում: որ ծա-
ռայում են հասարակաց օգտին բաւականութիւն
տալու համար:

Ճութիւններից, տանջանկքներից և առ հասարակ այն ամենից, ինչ որ նրա բարեկեցութեանը զրկանք է պատճուռում, և որոնում է իւր օգուածը, յուսալով դանել այն ուրախութիւնների և վայելչութիւնների մշջ, որպիսիք կարող է տալ նրան կեանքը. կամ այսպէս՝ մեղանից իւրաքանչիւրը ձգառում է անձնական բաղդին և բացի այդ բաղդից ուրիշ ոչինչ չի ցանկանում, ուստի և մարդկային ցանկութիւնների միւս առարկաները, այն է՝ Հարստութիւնը, փառքը և մինչև անդամ նոյն իսկ բարեգործութիւնը միջոցներ են, որոնք դէպի այդ բաղդաւոր կեանքն են տանում: Եթէ այդ այդպէս է, ապա ուրեմն մարդկային կեանքի նպատակն, ի հարկ է, պէտք է համարել միայն սեպհական — անձնական երջանկութիւնը: Բայց անկարելի է հասնել անձնական բաղդաւորութեան, կամ առ նուազն շատ դժուարին է, քանի որ մեզ շըջապատած են աւելի դժբաղդ մարդիկ: Ուստի և անձնական բաղդաւորութեան հասնելու համար՝ պէտք է աշխատել ուրիշների բաղդաւորութեան համար, ընդ նմին մեր բոլոր ոյժը դորձադրելով այն նպատակի համար, որ հնարաւոր լինի փոքր առ փոքր պակասեցնել մարդկային տանջանքի ընդհանուր գումարը և բաղմատատկել մարդկային բաղդաւորութիւնը:

հաղղն էլ որի մասին է խօսքս, հասանելի է գեթ անուզզակի ճանապարհով, մի ճանապարհ, որ սպառնում է այն ամենին, ինչ որ խոչընդում է հանդիսանում մարդուն բաղդաւոր լինելու համար. մի ճանապարհ, որ նուազեցնում է տանջանքը: Աերացրէք վատ օրէնքները և կամայականութիւնը, որ մարդուն զրկում են իրեն մատչելի երջանկութեան աղբիւրները վայելելու ազատութիւնից, այն ժամանակ նա կը հասնէ, այն դրութեան, որ կարելի է նախանձելի համարել, եթէ միայն յառաջ չըդան կեանքի դրական դժբաղդութիւնները՝ չքաւորութիւնը, հիւանդութիւնը, չարութիւնը, ստորութիւնը և մերձաւոր առարկաների վազաժամ կորուսար, և այլն: Բայց ով կարող է վճռել ապացուցանելու, որ մինչեւ անգամ նոյն իսկ ամենամեծ դժբաղդութիւնները, ուրոնցից մարդիկ տանջուում են, ըստ իրանց էութեան՝ անյազմելի են, կամ գոնէ չի կարելի շատ չափաւորել: Մարդկային իմաստութիւնը միացնելով իւր ոյժերը առողջ դատողութեան առանձին—մասնաւոր անհատների հեռատեսութեան հետ՝ կարող է ոչնչացնել չքաւորութեան այն աստիճանը, երբ նա արդեն տանջանքի տեղն է բռնում: Նոյն իսկ հիւանդութիւնը, մարդու այդ անզուսպ թշնամին՝ կարելի է հասցնել մինչեւ ամենափոքր չա-

փիւ—լաւ, ֆիզիքական և բարոյական կը ը-
թութեան օգնութեամբ և առողջութեան
վնասակար երևոյթների առաջն առնելով։ Խնչ
վերաբերում է, այն տանջանքներին, որոնց են-
թարկուում է մարդս շնորհիւ որ և է, ձախոր-
դութեան, այդ ծագում է, առ հասարակ մար-
դուս անձնական անխոհեմութիւնից, կամ
ցանկութիւնների սխալ—ծուռ ուղղութիւն
տալուց և կամ հասարակական վնասակար
հիմնարկութիւններից։⁴⁾

Այս վարդապետութիւնը հենց առաջին
իսկ ծանօթութիւնից յետոյ՝ գրաւում է դեպ
իրան և, հակառակ նախընթացի, աւելի խա-
ղաղացուցիչ և սփոփեցուցիչ է երևում։ Եւ
յիրաւի՝ ո՞ւմ չի ուրախացնիլ ընդհանուր,
վճռական կերպով արտայայտուող, բաղդաւո-
րութեան յոյսը, և ո՞վ չի համոզուում, որ
ընդհանուրի օգտին կամ բաղդաւորութեան
համար գործելը վսեմ ու ազնիւ գործ է։
Այսուամենայնիւ՝ բաղդաւորութիւնը ևս,
ինչպէս և նախընթաց վարդապետութիւնը, չի
կարող գոհացումն տալ նրան, ով լրջօրէն որո-
նում է մարդկային կեանքի վախճանական նպա-
տակի վերաբերեալ հարցի պատասխանը։ Այս

1) Мальцевъ „Нравственная философія у-
тилитаризма“.

վարդապետութիւնը կրում է յիշողութիւնների խանգարումն, անորոշութեան և նսեմութեան ինիք, որի հետեւանքը լինում է այն, որ նրա լայն և բարերար գործադրութիւնը իրականութեան մէջ անհնարին է, դառնումն և նրա անգոհացուցիչ լինելը՝ կեանքի վերջին նպատակի մի լուրջ հարց:

Ամենից առաջ մեր զննութեան առաջ վարդապետութեան մէջ նմանեցնում և միացնում են օգտի վայելութեան և բաղդաւորութեան գաղափարները, մինչդեռ այդ գաղափարներն իրանց բովանդակութեամբ բոլորովին տարբեր են և իրականութեան մէջ էլ միշտ տարբերուում են միմեանցից: Օգտակարը ամեն անգամ դիւրեկան ու զուարձայի չի լինում, ընդ հակառակ՝ յաճախ է, պատահում, որ օգտակարը հակառակ է զուարձութեան ու վայելութեան այն իմաստով, որպէս առհասարակ մենք ենք հասկանում: Օրինակ՝ մատաղ սերնդի կրթութիւնն անկասկած օգտակար է նրանց համար, մինչդեռ նրանց մատչելի զուարձութիւնները՝ երեակայութեան մէջ միշտ կապուած են դասարանական աշխատանքները դադարեցնելու հետ: — Ապա՝ ոչ բոլոր զուարձութիւններն ու վայելութիւնները կապուած են օգտակարի հետ: Նրանցից շատերը, առաւելապէս նրանք, որ

մեծամասնութեան համար հրապուրիչ են երկում, բայց դրականապէս վնասում, քայլայիչ կերպով ազդում են ֆիզիքական և հոգեսոր ոյժերի ամրութեան վրայ և վերջ ի վերջոյ տանում են դէպի հիւանդութիւններ և այն տխուր ինքնազիտակցութեան, թէ կեանկըն անց է կացրած անկանոն կերպով և թէ անդառնալի կորած է թանկադին զանձը, այն է՝ մարմնի և հոգու առողջութիւնը, մի խօսքով՝ հետեանքը լինում է տանջանք: Խսկ այս վերջին հանդամանքից վերջապէս ենթադրուում է, որ զուարձութիւններն ու վայելչութիւններն այլ բան են, բաղդաւորութիւնը՝ այլ և նրանց միացնելը ըստ ամենայնի անհնարին է: Խնչ էլ որ լինի բաղդաւորութիւնը, անհնարին է նորան այն վերագրել, ինչ որ կարող է տանջանք պատճառել: Այսպիսով այն վարդապետութիւնը, որի մասին է մեր խօսքը, իւր հիմնական գլխաւոր ենթադրութիւնների մէջ բոլորովին տարբեր գաղափարների հետ է շփոթուում, — մի եղանակ, որը բնականաբար կորցնում է դէպի ճշմարտութիւնը, դէպի նորա վերջին եղանակցութիւնների հիմնաւորութիւնը և դէպի այդ գատողութիւնը եղած հաւատը: «Որպէս զի կարելի լինի հասնել անձնական բաղդաւորութեան, որ կեանքի վախճանական նարա-

տակն է, պեսք է ուրիշների բաղդաւորութեան համար աշխատել, ձգտելով թեթեացնել մարդկային տանջանքները և մեծացնել մարդկային բաղդաւորութեան ընդհանուր գումարը՝ — այսպիսի խորհուրդ է տալիս մեզ ուտիլիտարիզմը իւր կանոնների մէջ։ Այդ խորհուրդը, ինչպէս որ արդէն նկատուած է, շատ գեղեցիկ է։ Բայց իրագործելու համար անհրաժեշտ է նախ որոշել, թէ ի՞նչ է բաղդը, երջանկութիւնը։ Սակայն այդ բնական և անխուսափելի հարցի համար մենք գոհացուցիչ պատասխան չունինք։ Ուտիլիտարիզմը չի տալիս մեզ բաղդի այնպիսի մի բացատրութիւն, որի ճշմարառութիւնն ամենքի համար պարզ լինէր և որի հետ այդ պատճառով ամենքը կարողանային համաձայնիլ։ Ուտիլիտարիզմը բոլորովին չի տալիս նոյն խև բաղդի որ և է բացատրութիւն և չի էլ կարող տալ, սահմանափակուելով իրական կեանքի մասին դիտողութիւններ անելով և զուարձութիւններն ու վայելչութիւնները երջանկութեան հետ հոմանիշ համարելով։ Բանն այն է, որ իւրաքանչյուր մարդ իւր զուարձութիւններն ունի և իւր տեսակէտով է հասկանում երջանկութիւնը՝ զարգացողութեան աստիճանի, կրթութեան բնաւորութեան և շրջապատող միջավայրի (среда) համաձայն։ Մինը, օրի-

նակ, շատ բարձր է դասում նիւթական յար-
մարութիւնները, զգայական զուարձութիւն-
ները և երջանկութիւնը նորա մէջ որո-
նում։ Երկրորդը ձգտում է հոգեորը—գե-
զամաշակ (эстетический) և մասւոր զուար-
ձութիւնների, և ցանկութեան չափով նրան
նուիրուելը համարում է իւր բարձրագոյն վա-
յելչութիւնը։ Մէկը միսիթարուում է նրանով,
ինչից շատերը սոսկալով ու սարսափելով խոր-
շում են. երկրորդը իւր ուրախութիւնն ու
երջանկութիւնը գտնում է շահերի այնպիսի
շրջանում, որոնք ահազին մեծամասնութեան
համար օտար են մնում և այլն և այլն։ Առկայն
որքան էլ տարբեր լինի զանազան մարդկանց
տեսութիւնը զուարձութեան և երջանկու-
թեան վերաբերմամբ, նրանք ամենքն էլ բոլո-
րովին իրաւացի են ուտիլիտարիզմի հայեցա-
կատով։ Ենթադրենք՝ որ ուտիլիտարիզմի գրդ-
խաւոր ներկայացուցիչները վայելչութիւնները
բաժանում են երկուսի. սպո՞—դժայական, որին
վիճակուած է անհասասատ երջանկութիւնը և
վու՞— հոգեւոր, որոնք կարող են արդարեւ եր-
ջանկացնել։ Բայց չ, որ ուտիլիտարիզմի վար-
դապետութեան էութիւնը ոչ թէ զուարձու-
թիւնների և երջանկութեան արժեքը գնա-
հատելու մէջն է, այլ թէ կեանքի նպատակիը
անձնական երջանկութիւնն է, և թէ երջան-

կութիւնը նոյնանից է վայելչութեան։ Ուստի
հենց որ մի նշանաւոր մարդ վայելչութիւն է
անում, հետեւաբար, ըստ ուտիլիտարիզմի տես-
սութեան երջանիկ է նաև արդ՝ ինչ աղբիւր-
ներից էլ որ ձեռք բերուած լինին այդ վայել-
չութիւնները և որքան էլ նրա երջանկութիւնը
տարօրինակ լիներ, ուտիլիտարիզմն իրաւունք
չունի որ և է պահանջ անելու նրանից, մանաւ-
ւանդ որ՝ հաւատարիմ մնալով իրան՝ անկարող
է ապացուցանելյ որ հոգեւոր զուարձու-
թիւններն են մարդկային վսեմ և ա-
ւելի ապահովուած երջանկութիւնը։ Այդ
ուտիլիտարիզմի նշանաւոր ներկայացուցիչների
տեսութիւնը իրբեւ կարծիք կարող է մնալ,
մի կարծիք, որ մարդկանց աշազին մեծա-
մասնութեան համար ոչ պարտաւորական է,
և ոչ համոզեցուցիչ։ Ապա ուրեմն՝ ուտիլի-
տարիզմը հնարաւորութիւն չունի բաղզի
այնպիսի բացատրութիւն տալ, որի ճշմար-
տութիւնը եթէ ոչ ամենքի, դեմք մեծամաս-
նութեան համար պարզ լիներ և որին,
այդ առթիւ մարդկանց մեծամասնութիւնը
կարող լիներ համաձայնիլ։ Բայց այդ դեպ-
քում հարց է ծագում. որպիսի երջան-
կութեան պէտք է ձգտել և որպիսի բաղզի
բարգաւաճման համար պէտք է հոգալ։ —
Այս հարցերը բնականաբար մնում են առանց

գոհացուցիչ պատասխանի։ բայց ընդ նմին և
անհնարին է դառնում մինչեւ անգամ հէնց
առաջին հաստատ քայլն անել ուակիտա-
րիզմի մասնացոյց արած ճանապարհով՝
կեանքի վախճանական նպատակին հասնելու
համար։

Անձնական բաղդաւորութիւնը, որի մէջ
է կեանքի նպատակը, ըստ հաստատութեան
ուակիտարիզմի ներկայացուցիչների, կարելի
է ձեռք բերել գէթ միայն բացասական ճա-
նապարհով, այսինքն՝ մարդկանց տանջանք-
ների թիւը թեթևացնելով։ Այդ ճանապար-
հով ընթանալով, նրանց ասելով՝ հնարաւոր
է իրագանչիւրի վիճակը նախանձելի դարձ-
նել։ Բայց հնարաւորութիւնը և հնարա-
ւորութեան իրագործումը՝—բոլորովին տար-
բեր բաներ են, և ներկայ զիազուածում
հնարաւորութեան և իրականութեան մէջ
անանցանելի խորխորատ կայ։ Այդ զգում են
հէնց իրանք ուակիտարիզմի կողմնակիցները,
ուստի և անձնական բաղդաւորութիւնը ձեռք
բերելու դրութիւնը սահմանափակում են,
ասելով՝ որ այդ հնարաւոր է, եթէ միայն
մարդուն չը հարուածեն զրական գժբաղդու-
թիւնները այն է հիւանդութիւնը, անձնա-
կան սիրով կապուած էակների անժամանակ կո-
րուսար և այլն։ Բայց արդեօք մարդս հնարաւո-

բութիւն ունի^օ իրանից հեռացնելու բազմա-
տեսակ դրական դժբաղդութիւնները։ Թող
օրէնքները որոնցով կառավարուում են մարդ-
կային հասարակութիւնները, հասնեն հնարա-
ւոր եղած կատարելագործութեան, թող իւ-
րաքանչիւրի համար ազատ մուաք բացուի
դէպի բաղդաւորութիւնը, յամենայն դէպս՝
մարդկային ոյժերից վեր է, օրինակ հեռացնել
հիւանդութիւնը, որից այնքան շատ է
տանջուում մարդկութիւնը և յոյս էլ չկայ
հասցնել այն անվերջ փոքրիկ շափի, որի մէջ,
ըստ երեւութիւն, համոզուած է և ուտիլի-
տարիզմը։ Զէ^օ որ բազմաթիւ և ամենադժուար
հիւանդութիւնները թագնուած են օրդա-
նիզմի մէջ և կազմում են մի ամբողջ շարք
իրեւ ժառանգութիւն նախընթաց սերնդի-
շատ հիւանդութիւններ նոյն իսկ ոչ մի կերպ
չի կարելի հեռացնել՝ ի նկատի առնելով
մարմնական կազմութեան մշտական քայքա-
յումը։ Եւ որպէս զի հնարաւոր լինի ոչն-
չացնել նրանց, անհրաժեշտ է ժամանակակից
մարդկանց համար վերստեղծել մարմնական
նոր բնութիւնն, որին ի հարկ է, ոչ մի կերպ
չի կարող օգնել նոյն իսկ ամենախելացի ֆի-
զիքական և բարոյական կրթութիւնը։ Ասկայն
ենթադրենք անհնարինը՝ թէ հիւանդու-
թիւնները վերջապէս ոչնչացած են, բայց և

այնպէս ոչ ոք չի կարող վճռապէս պնդել,
թէ կարելի կը լինի անձնական սերտ սիրով
կապուած առարկաների անժամանակ կորուստ-
ների առաջն առնելց մանաւանդ որ՝ սիրող
սրտի համար սիրեցեալ էակի կորուստը միշտ
վաղաժամ է համարուում։ Խայց ի՞նչ ասել
մարդու գէսի իդէալներն ունեցած ցան-
կութիւնների ու ձգտումների մասին։ Մարդ-
կային ցանկութիւններին սահման չը կայ, և
իւրաքանչիւրի համար իւր իդէալները գըտ-
նուում են մի անհասանելի մշուշապատ հեռա-
ւորութեան մէջ։ Աւստի և մարդկանցից ոչ ոք
երկար ժամանակով իրեն գոհ և խաղաղ չի
կարող համարել։ Եւ այսաեղից ել ծագում
են համարեա մշտական անբաւականութիւն-
ները, կեանքի թերութիւնների զգացումը և
գաղանի թախիծը, որին իրրեւ հետեանք՝
քիչ անդամ չեն լսուում և ծանր հառաջներ
նոյն իսկ ըստ երեւութիւն ամենաբաղդաւոր ար-
տաքինի մէջ, և մինչեւ իսկ ոսկու և աղամանդի
մէջ դառն հեծկլտանքներ են լսուում։ Պարզ
է՝ որ հասարակական ոչ մի իմաստութիւն և
նրա առանձին անդամների ոչ մի հեռասե-
սութիւն չեն կարող գոհացնել անսահմանը,
մերձեցնել անհասանելին իրականութեան և
այդպիսով ոչնչացնել մարդկային հոգու բազ-
մաթիւ և ամենածանր վշտերի և տանջանք-

ների աղբիւրը։ Այնուհետև պարզ է, և այն,
որ յոյսը՝ իւրաքանչիւր անձնական բազդաւո-
րութեան հասցնելու համար՝ մարդկային
տանջանկների կրծատման վրայ հիմնած յոյսը
անհիմն է, երեւակայութիւն է, լոկ երեւու-
թական, մանաւանդ՝ երբ ուտիլիտարիզմը
հնարաւոր է համարում հասնել քարոզած
բազդաւորութեան՝ բացառապէս երկրային
կարծատե գոյութեան սահմանների մեջ։ Բայց
կարո՞ղ է արդեօք ցնորական և անկարելի երեւ-
ակայութիւնը մարդկային կեանքի վախճա-
նական նպատակը համարուիլ։

Սակայն ուտիլիտարիզմի մնանկութիւնը՝
կեանքի նպատակի մասին եղած վարդապե-
տութեան մէջ՝ ամենից աւելի ակներեւ երեւան
է գալիս առաւելապէս գործի ժամանակ։ Զը-
նայելով ուտիլիտարիզմի անորոշ և խախուտ
հիմնական կանոններին, բայց և այնպէս վեր-
ջին ժամանակս մեծ ուշադրութիւն է գրա-
ւում և բազմաթիւ կուսակիցներ ունի, ըստ
որում ի միջի այլոց, ուտիլիտարիզմի քարո-
զիչները բարձր ազատական և մարդասէր
գարձուածներով (ֆրազներով) քօղարկում են
նրա թերութիւնները յաչս ժամանակակից
սերնդի։ Քիչ չեն և մեզանում այնպիսի մար-
դիկ, որոնք աչքի են ընկնում որպէս ուտի-
լիտարիզմի հետևողներ։ Այդ մարդիկը ամենից

առաջ հաստատապէս իւրացրել են ուտիլիտարական վարդապետութեան մանաւանդ այն կանոնները, թէ՝ կեանքի վախճանական նպատակն է անձնական երջանկութեան հասնելը, և անխոնջ գործունեութեամբ (ՅԱՊՐՈՒԹՅԱՆ) ձգտում են այդ նպատակին, իրանց ևս համարելով ժամանակակից մտածողների գտակարգի անդամ՝ որոնում են բարձր հօգեկան վայելչութիւններ։ Նրանց համար լաւ դիրքը պահանջ է, էստետիքական բաւարարականութիւնները նրանց համար սովորութիւն են դարձել։ Բայց ընդ նմին շատ էլ անտարբեր չեն դէպի նիւթական վայելչութիւնները, դէպի համադամ կերակուրները, շքեղ հագուստը, դէպի արտաքին փառահեղ արդուզարդը։ Որպէս գործնական մարդիկ՝ նրանք այդ ամենին մեծ կամ փոքր չափով հասնում են և որպէս իրանց նպատակին յաջողութեամբ հասած մարդիկ՝ կրում են ինքնահաւանութեան և յաճախ ինքնագոհութեան կնիք։ Ոչ մի ըսպէ անդամ՝ ըստուանալով՝ թէ կեանքի նպատակը անձնական երջանկութիւնն է, ժամանակակից այդ ուտիլիտարիստները ըստ երեսյթին, միշտ յիշում են ուտիլիտարական վարդապետութեան և մի այլ կանոն, այն՝ թէ անձնական երջանկութեան արտադապէս հասնելու և նրա ապահով

զութեան համար հարկ է աշխատել և ուրիշ-
ների երջանկութեան մասին Ուստի և նրանք
տարբերուում են ուրիշներից իրանց քաղցր և
քաղաքավարի վարժունքով ըստ երեսյթին՝
ամենայն անկեղծութեամբ կարեկցում են ամեն
մի վշտի, ամենայն պատրաստականութեամբ
շտապում են պաշտպանել իւրաքանչիւրին
իրանց ձգտումների մէջ։ Եւ եթէ ականջ
դնեք նրանց ճառախօսութիւններին, առաջին
անգամից իսկ չեք կարող չը կարծել որ ձեր
առաջ կանգնած են մարդկութեան ճշմարիտ
բարեկամները։ Համանման մարդկանց հետ
առաջին անգամ պատահելուց՝ նրանք ակա-
մայ գրաւում են և առ հասարակ դառ-
նում են կուռքեր գիւրահաւատ և կեանքի
մէջ անփորձ մարդկանց համար։ Բայց ժամա-
նակակից ուտիլիտարիստների ուրիշներին այդ-
պիսի կարեկցարար վերաբերմունքը շատ ան-
կայուն և անյուսալի է։ Նրանց մասնակ-
ցութիւնը շարունակուում է մինչ այն ժամա-
նակ, քանի որ նրանց հաճելի է, ձեռնտու-
է, նպաստում է նրանց ժողովրդականու-
թեան և քանի որ նրանցից ոչ մի առանձին
խոշոր զոհողութիւն չի պահանջուում,
բացի բառերից ու բառերից։ Բայց հենց որ
հանգամանքները փոխուեցան, դեպի ուրիշ-
ները եղած կարեկցութիւնն էլ սկսում է

փոխուիլ տհաճութեան, և այդ կարեկցութիւնն էլ արագապէս անյայտանում է։ Եւ նրանք, երեկուայ ձեր այդ բարեացակամներն ու բարեկամները, այժմ սկսում են դէպի ձեզ չոր ու սառն վերաբերուիլ և աշխատում են չը նկատել և չը ճանաչել ձեզ։ Այդ դեռքիչ է։ Մի խոշոր օգուտի դիպուածում՝ նրանք պատրաստ են լինում մատնել ու վաճառել ձեզ։ և յիրաւի՝ շատ յաճախ և մատնում, և' վաճառում են, և որ աւելի ցաւալի ու սարսափելի է՝ մատնելով ու վաճառելով հանդերձ՝ մնում են ըստ առաջնոյն անվրդով ու բարեհոգի, ինքնակամ ժպիտներեսին։ Նրանց շատ հաճելի է, որ շնորհիւ իրանց ճարպիկ գործողութիւններին՝ նրանց անձնական երջանկութիւնը չի ենթարկուիլ ամենաչին զրկանքի և մինչև անդամ դեռքազմապատկուել է։ Հասկանալի է՝ որ այդ տեսակ մարդկանցից չի կարելի սպասել մարդկային երջանկութեան աճումը։ Նրանց գործունէութիւնը մարդկանց թշուառութիւնն ու տանջանքը միայն կարող է բազմապատկել։ Այն ինչ նրանք, ուտիլիտարիզմի այդ ճշմարիտ կուսակիցները, բացի ուտիլիտարական կանոններից՝ ուրիշ բարոյական կանոններ չեն ընդունում։ Եւ չէնց այդ իսկ կանոններըն ինքնըստինքեան ուտիլիտարիզմի մնան-

կութեան, ինչպէս անձնական երջանկութեան մասին եղած վարդապետութեան, այնպէս և մարդկային կեանքի վախճանական նպատակի թերութեան անհերքելի ապացոյցներ են:

Այսպիսով դուքս է գալիս, որ մարդկային իմաստութիւնը հնարաւորութիւն չունի գոհացուցիչ պատասխան տալու մարդկային կեանքի վախճանական նպատակի հարցին: Ո՞րտեղ կարող ենք գտնել նրան: — Այնտեղ, ուր ամփոփուած են յաւիտենական բանի պատգամները, և ամենայն ձշմարտութիւն պարունակուում է մեր Տէր Յիսուս Քրիստոսի վարդապետութեան մէջ, որ զբուած է Աւետարանում և լուսաբանուած է Նորա առաքեալների զբուածքներում:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՌԴ

|

Աւետարանում; գլխաւորապէս մեր Տէր
Յիսուս Քրիստոսի բազմութեան կամ նեղ՝
իւր մօտիկ աշակերտների՝ շըջանում խօսած
քարոզութեանց մլչ, նոյնպէս և նրա առ
Հայրն Ասաուած ուղղած աղօթքներում
մենք շատ տեղ ենք պատահում այն հարցին,
որը վերաբերում է մարդկային կեանքի վախ-
ճանական նպատակին: Այդ տեղերը միասին
վերցրած՝ տալիս են միանգամայն լիակատար
և պարզ պատասխան յիշեալ հարցին: Այդ-
պիսի տեղերից են ի միջի այլոց և հետե-
եաները. «Ետան Հօր իմոյ օթեանք բազում
են. ապա թէ ոչ՝ ասացեալ եր իմ ձեզ՝ եթէ
երթամ և պատրաստեմ ձեզ տեղի: Եւ եթէ
երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ
գամն և առնում զձեզ առ իս զի ուր են
իցեմն և զուք անդ իցեք» (Յովհ. մ.թ. 2—3):
«Ես եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և
կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ:
եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գի-
տէիք, և այսուհետեւ գիտասջիք զնա . . . :

Որ ետեսն զիս՝ ետես զՀայրն» (Յովհ. Ժ. 6, 7, 9): «Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր եսն եմ, և նոքա իցեն ընդ իս: Եւ ծանուցի նոցա զանուն քո, և ծանուցից. զի սէրըն՝ զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես ի նոսա» (Յովհ. Ժ. 24, 26): «Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուածաեսցին: Երանի՛ է ձեզ՝ յորժամ՝ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուր վասն իմ: Յնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. Ե. 8, 11, 12): «Եկայք, օրհնեալը Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբաննէ աշխարհի» (Մատթ. ԻԵ. 34): Ի շարս Տիրոջ այս պատգամների՝ կարելի է դնել, որպէս կրինութիւն, բացայայտութիւն և օրինակ, առաքեալների չետեւեալ իմաստալից ճառեըլը. «Այլ մեր առաքինութիւն յերկինս է» (Փիլ. Գ. 20): «Զոր ակն ոչ ետես, և ունին ոչ լոււաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց» (Ա. Կորնթ. Բ. 9): «Քանզի փոքր ի շատէ զիտեմք և փոքր ի շատէ մարդարէանամք: Այլ յորժամ՝ եկեսցէ կտտարումըն, փոքր ի շատէս խափանեսցի: Այժմ՝ աւանեմք իրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ՝ զէմ յանդիման. այժմ՝ խելամնաւ եմ

փոքր ի շատե, այլ յայնժամ գիտացից» (Ա. Կորն. ԺԳ. 9, 10, 12): «Ովելիք այժմ որդիք Աստուծոյ եմք, և չե ես է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք, զիսհմբ՝ զի յորժամ նա յայտնեցի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որսիս և էն» (Ա. Յովհ. Գ. 2): «Զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոն նստի ընդ աջմե Աստուծոյ: ... Կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած» (Կողոս. Գ. 1, 3.):

Յառաջ բերած օրինակներից երեսում է, որ մարդկային կեանքի վախճանական նպատակի մասին վարդապետութիւնը՝ որ կրկնուած և բացայատուած է, առաքեալների գրուածքներում, Աւետարանը առաջին գծի վրայ դնում է յաւիտենական կեանքը: Ըստ աւետարանական վարդապետութեան՝ մարդկային կեանքն ամրողնովին չի ընդհատուում՝ այսաեղ՝ երկրի վրայ, գերեզմանն ու դագաղը նրա համար սահման չէ: Երկրաւոր կեանքն ընդհանուրապիս կեանքի առաջին շրջանն է, նա կը շարունակուի դագաղի սահմաններից դուրս եւ դարձեալ յաւիտեան: Ընդ նմին իւրաքանչիւր առանձին մարդու գիտակցութիւնը և անձնաւորութիւնը մնում են անմատչելի: Եւ ահաւանիկ այնտեղ՝ դագաղի այն կողմն է գտնեւում մարդկային կեանքի վախճանական նը-

սպատակը և ոչ այսաեղ երկրիս վրայ, և միայն
այնաեղ փախճանական նպատակը կտտարե-
լապէս հասանելի է: Ո՞րն է այս նպատակը:—
Կենդանի և միակ Աստուծոյ հետ ամենաջեր-
մեռանդ և սերտ—մատերիմ հաղորդակցութիւն
և միաւորութիւն, այն Աստուծոյ, որ ամենի-
մաստ և բարերար էակ է, որ Ճշմարտութեան
և սիրոյ Աստուած է:

Բայց արդեօք չափազանց վերացական և
չափազանց բարձր չէ այս վարդապետութիւնը:
Այն հազիւ միայն փիլիսոփայական խելքին
մասչելի է. խոկ հասարակ խելքին հազիւ
թէ հասկանալի լինի: Բայց արդեօք մտա-
ւորապէս անզարդացած մարդը կարող է
աւետարանական այդ վարդապետութեան հետ
կապել որ և է պարզ և կենդանի հասկա-
ցողութիւն մարդու կեանքի փախճանական
նպատակի մասին և այդպիսով նրա մէջ հան-
գաստութիւն և մսիթարութիւն դանել: Յստ
երեսյթին թոյլատելի է այս բանում կաս-
կածելը:

Այո՛, աւետարանական վարդապետութիւ-
նը կեանքի նպատակի մասին շատ բարձր—վե-
րացական է, բայց ընդ նմին և շատ պարզ: Եւ
եթէ փիլիսոփայական խելքը դժուարանում է
լուսաբանել և ընդունել այն, սակայն նրա ճըշ-
մարտութիւնն անմիջապէս լուսաբանուում է,

ամենապարզ և խաղաղ հոգու առաջ և ուրախութեամբ էլ ընդունուում նրանից: Բանն այն է, որ այդ վարդապետութիւնը, որի մասին է, մեր խօսքը, պատասխանում է ամենաարմատական հարցերին և մարդկային հոգու պահանջներին, ուստի և մարդս կարող է նրա մէջ գտնել լիակատար բաւարարութիւն, ընդ նմին և միիթարութիւն և հանգիստ:

II.

Միթէ՝ իմ մարմնի մահով իմ կեանքը վերջնականապէս պէտք է, ընդհատուի^o. իմ մարող աչքերում լուսոյ վերջին կայծի հետ պէտք է շիջանի^o և իմ զիտակցութեան վերջին ձառագայթը. պէտք է մեռնի^oն արդեօք իմ զգացմունքներն ու ձգտութները. իմ միտքըն ու անձը ոչիշութիւն պիտի դառնան: Այս պիտի հարցեր ակամայ ծագում են մարդու մոքումն երբ նա մտածում է, երկրաւոր գոյութեան վախճանի մասին, երբ նայում է գերեզմաններին, որոնք միշտ կանում են մեր հարազաններին: Եւ երբ այդ հարցերը մեր ականջին վախտում են տիտոր — անհաճոյ «այո՞ն», մեր սիրտն ակամայ սեղմուումն կծկուում է ցաւից և վրդովուած՝ պատասխանում է՝ «ոչ, այդ խարէութիւն

է. մարդուս բաժինը անմահութիւնն է.
հանգստարանի սահմաններից դուրս մարդուս
սպասում՝ է յաւիտենական կեանքը: — վը-
կայելով այդպիսի հառաջալի սպատասխանով,
որ անմահութեան պահանջը, յաւիտենական
կեանք ակնկալելը բնածին են մարդուն: Եւ այդ
պահանջին արձագանք տալով՝ համարեա նախ-
նի բոլոր կրօնները պատմել են իրանց չետեղ-
ներին հանդերձեալ կեանքի մասին, և հեթա-
նոս խորհողներից շատերը պնդել են նոյն խակ
անմահութեան վրայ: Բայց նախնեաց կրօնա-
կան այդ գաղափարները — հասկացողութիւն-
ները հանդերձեալ կեանքի մասին վերջին ծայր
անորոշ, շատ կոպիտ ու անհեթեթ էին
և նրանց հաւատալը շատ դժուարին ու ծանր
էր: Խակ վիլխովիայական վարդապետութիւն-
ները անմահութեան մասին՝ ենթադրութիւն-
ների տատանուող բնաւորութիւն ունեին և չ-
ին կարող ուրիշների հաւատը զարդացնել դեպ
իրանց, ուստի թէ մէկը և թէ միւսը անկա-
րող էին գոհացնել սրտի ամենօրեայ պահան-
ջը, սրանից է՝ որ մահուան երկիւղը չին մարդ-
կանց բոլորի կեանքին խաւար էր սպասում,
և այդ մահուան երկիւղից ըստ առաքելոյ բա-
նին իրանց ամբողջ կեանքում ենթակայ էին
սարկութեան (Եբր. Բ, 15):

Մահուան երկիւղը թունաւորում էր նը-

բանց բոլոր ուրախութիւնները, հարկադրում
էր խորասուզութիւն տիտոր մտածութիւնների
մեջ մինչև անգամ այնպիսի ուրախ ու կա-
տակառէր մարդկանց, որպիսին էր Անակրէոն
բանաստեղծը, և այնպիսի զգաստ մտածողնե-
րին ինչպէս Կիկերոնը: Վերջինոս ի միջի այ-
լոց խոստովանում էր, որ իւր ընդունած հե-
տախուզութեանց եղանակը՝ համարել մահը¹
իրերի բնական և անհրաժեշտ հոսման վախ-
ճանը, արամադրում է դեպի վիշտը, և կեան-
քը դարձնում է ել առելի թշուառ: Թէ ո՞ր-
քան ծանր էր նախկին մարդու համար: որի
մեջ տակաւին արմատախիլ չէր եղել անմա-
հութեան պահանջը, չունենալ ոչ մի հաստա-
տուն հաւատ դեպի անմահութիւնը այս
ի միջի այլոց պարզ երևում է Բ. դարու մի
մասենազրի մեզ հասած խոտովանութիւնից,
որը հեթանոսութիւնից քրիստոնէութեան էր
դարձել: Այդ խոստովանութեան մեջ մենք կար-
դում ենք, «դեռ երիտասարդական վաղ հա-
սակիցս վիշան ու անհանգստութիւնը ճըն-
շում էին իմ հոգին, ըստ որում ինքս էլ, չը-
զիտեմ թէ ինչպէս, մտածում էի մահուան
մասին և ինքս ինձ հարցնում, թէ արդեօք
մահուանից յետոյ ուրիշ կեանք կը լինի՞ ինձ
համար, կամ թէ ես ոչնչութիւն կը դառ-
նամ, ինչից զոյացել եմ: Կը յիշե՞մ արդեօք

մաշուանիցս յետոյ այն կեանքի մասին, թէ,
անսահման ժամանակը կը տանէ, առևն ինչ
մոռացութեան անդունդը, և կանչետացնէ,
մինչեւ անգամ նրա մասին մեր ունեցած
վերջին յիշողութիւնը: Մինչդեռ այդ և զոյ-
նանման մտածողութիւններ անընդհատ վըս
տում էին իմ հոգու մէջ, ևս մի անբացա-
տըելի կարօտ զգացի և իմ ոյժերն ինձ զա-
ւաճանեցին: Բայց մանաւանդ աւելի վշտալին
այն էր, որ երբ հենց փորձում էի ձնշել այդ
անհանգստութունը, նա աւելի ևս մէծ ու-
ժով ալեկոծում—վրդովում էր ինձ: Կրապառ-
ձառն այն էր, որ իմ մէջ զոյութիւն ուներ մի
բան, որ ինձ թոյլ չեր տալիս հանգստանալ.
այդ անմահութեան պահանջն էր: Ես այն
ժամանակ յաճախում էի վիլիսովայտկան դրա-
բոցներ, որպէս զի նրանցից զիտութիւններ
շահեմ: Բայց այնտեղ ևս ոչինչ չգտայ, բացի
զաղափարներն անընդհատ հաստատելուց ու-
բացասելուց և անվերջանալի վիճաբանութիւնն-
ներից: Եթէ այդ զպրոցներում զրականապէս
քարոզուեր, որ հոգին անմահ է, ես ինձ բաղդա-
ւոր կըզդայի: Ընդհակառակն ես ախրութեամբ
դուրս էի գալիս, քանի որ լինում էին հակա-
ձառութիւններ և պնդում էին, որ հոգին մա-
հացու է: Բայց թէ մէկ և թէ միւս կարծիքնե-
րի մէջ ևս կատարելապէս համոզուած չեմ

Այն ժամանակ իսկապէս տիրած՝ ասում էի
ինքս ինձ, թէ իզուր ինչու ես տանջուռում
քանի որ ամեն բան վերջ պիտի ունենայ:
Եթէ մահուանից յետոյ գոյութիւն չըպէտք
է ունենամ, ասդա ուրեմն էլ ինչու համար
են այդքան նեղութիւնները: Եթէ մահուա-
նիցս յետոյ կեանք է սպասում ինձ, այն
ժամանակ ես պէտք է ապրեմ ազնուարար,
որպէս զի ես չարչարանկների չենթարկուիմ
խաւարչախն տարտարոսում: Բայց ընդդեմ
այս խօսքերիս դարձեալ ինքս ինձ հակածա-
ռում էի ասելով, որ այդ ամենն առասպելներ
են⁴: Նմանօրինակ խոստովանութիւն կըդանենք
Յուստինոս մարտիրոսի և Տատիանոսի զըր-
ռածքներում: Այդպիսով պարզ է, որ անմա-
հութեան վերաբերեալ հարցը վերացական հարց
չէ, այլ կեանքի հարց է, և ս. Աւետարանը
գոհացնում է մարդկային հոգու ամենօրեայ
այս պահանջը, զերեզմանի սահմաններից
դուրս յաւիտենական կեանքը ամեն կասկա-
ծից վեր դասելով:

III.

Ապրել առանց Աստուծոյ, առանց բար-
ձրագոյն էակի մարդո չի կարող, թէ և դըժ-

⁴ Հետաինքեր՝ ջատագովութիւն քրիստոնէ-
ութեան. II. 6—8.

բաղդաբար կարող է երկար ժամանակ մնանալ Նրան։ Այդ պատճառով մարդս իւր զարգացողութեան բոլոր աստիճաններում որոշնում է Աստծուն, ձգտում է մերձենալ Նրան։ Այդ ձգտումն իւր համար ամենալաւարտայայտութիւնը գտնում է կրօնքի մէջ։ Բայց ո՞րքան կրօնն ընդհանրական է, նոյնքան ընդհանրական է, և այդ ձգտումը Կրօնի ընդհանրականութեան ասպացոյցը շատերը հաստատես բացասում են, բայց ինչպէս ցոյց են տալիս հին ու նոր վկայութիւնները, այս փաստը բարձր է ամեն տեսակ կասկածանքից։ Ի հնումն Արիստոտելը, որ պատմական և ազգախոսական ծանօթութեանց մեծ պաշար ուներ, չեր ճանաչում մի ազգ, որ հաւատ չունենար դէպի Աստուածութիւնը։ Իսկ կրօնի ընդհանրականութեան մասին յաճախակի է յիշատակւում Կիկերոնի հեղինակութիւնների մէջ։ Բայց նախնիներից նշանաւոր է մանաւանդ Պլուտարքոսի հետեւեալ վկայութիւնը (Adversus Colotem οριειοւ)։ «Նայեցէք, ասում է Պլուտարքոս, երկրի երեսին. դուք կը գտնէք քաղաքներ առանց ամրութիւնների, առանց զիտութիւնների, առանց իշխանական դաստիարագութեան. մարդիկ կը տեսնէք առանց հաստատ բնակարանների, որոնք չը դիտեն փողի դորձածութիւնը, որոնք հասկացողութիւն-

Հունին շքեղ արհեստների մասին, բայց դուք
չեք կարող գտնել մարդկային ո՛չ մի հասարա-
կութիւն առանց հաւատոյ դեպի Աստուա-
ծութիւնը ո՛չ մի քաղաքա որի մեջ չըլիներ
որ և է տաճար, որ սովորութեան մեջ չըլինեին
ազօթքներ, զոհեր, երդումներ : Նոր գիտական
գրականութեան մեջ մենք նոյնպէս շատ վկա-
յութիւններ ենք դանում կրօնի ընդհանրա-
կանութեան մասին մարդկութեան մեջ: Այդ
վկայութիւնները պատկանում են այն անձանց,
որոնք յայտնի են իրանց անաշառութեամբ:
Այսպէս գերմանական նշանաւոր դիանա-
կան Հումբոլդտ իւր «Տիեզերք» դրքի մեջ
*(I, 16) գրում է, թէ՝ «նոյն իսկ վայրենի
ազգերի մեջ, նա նկատել է, որ յարգի է այն
խորհրդաւոր դաշն, որ կապում է մարդուն
Աստուածութեան հետ»: Վայաց «Մարդարա-
նութիւն բնական ազգերի» հեղինակը նոյնպէս
չի ցոյց տալիս ո՛չ մի ազգ, որ օտար լիներ
կրօնական հասկացողութիւնից: Վունդտի
(«Մարդու և կենդանիների հոգին», II. 279)
ասելով՝ «աւելի ուշագիր հետախուզու-
թիւնը միշտ բաց էր անում, մինչև անդամ
կոպիտ վայրենիների մեջ այնպիսի բարքեր ու
սովորութիւններ, որոնցից կարելի է որոշակի
եզրակացներ, որ նրանց մեջ ևս դայութիւն են
ունեցել կրօնական հասկացողութիւններ, թէ

և շատ էլ նման չեն եղել միմեանց։ Աերջապէս ֆրանսիական ժամանակակից բնագէտ Կառլֆաժը (Das Menschengeschlecht. II. 200) կրօնի ընդհանրականութեան ապացոյցը ընդունում է անկասկածելի, ընդ նմին բարոյականութեան և կրօնի վրայ մատնանիշ է, անում որպէս մարդկային հոգու բնական սկզբնական արանձնայատկութիւններ, որոնք եապէս զանազանում — որոշում են մարդուն կենդանիներից։ Բայց Աստուածութեան հետ հաղորդակցութիւն որոնելով՝ մարդս կամենում է կենդանի, անմիջական մերձեցումն, ցանկանում է դիմել բարձրագոյն էակին խնդրուածքներով, շնորհակալութեամբ, յանձնել իրան նրա հովանաւորութեանն ու պաշտպանութեանը։ Այս աղից հետեւմ է, որ չըկայ այնպիսի կրօն, որ չունենայ ազօթք։ Եւ այս հանրամարդկային ձգտման դէմ յանդիման գալիս է, նորուիսի յայտնութիւնը կեանքի նպատակի մասին։ Այդ յայտնութիւնը ծանուցանում է, որ այդպիսի կենդանի, անմիջական հաղորդակցութիւն բարձրագոյն էակի հետ յաւիտեան սպասում է, մարդուն, և իզուր չէ, որ մարդս այնքան բացարձակ կերպով ցանկանում է այս հաղորդակցութեանը, որովհետեւ հենց նրա մէջըն է, մարդկային կեանքի վախճանական նըպատակը։

Բայի յիշատակած պահանջներից՝ մարդկային հոգու մեջ գոյութիւն ունին և այլ պահանջներ ու ձգտումներ, որոնք այնքան ել էական չեն, բայց և որոնք են: Այսպէս է ճշմարտութեան պահանջը և նրան ձեռք բերելու տիրապետելու ձգտումը, արդարութեան պահանջը և այն իրազործելու ձգտումը:

IV.

Զդաելով տիրապետել ճշմարտութեան, ըմբռնել անյայտը՝ մարդս իւր ուշադրութիւնը չի ըեւեռում մերձաւոր իրերի վրայ, այսինքն այնպիսի իրերի, որոնց վրայ, ըստ երեսյթին, ամենից առաջ բնականարար պիտի կեղընեանար: Ընդհակառակն՝ նրա միաքը մշտապէս անցնում է մերձակայ իրականութեան և փորձառութեան սահմանից գուրսա ընթանարով դէպի երեւակայականը՝ փորձնականից բարձր աշխարհի, և այստեղ ջանումէ, վճռել այնպիսի հարցեր, որպիսիք են, օրինակ՝ ամբողջ գոյացութեան սկզբնական պատճառների և փախճանական նպատակների, մարդկային հոգու յատկութիւնների և վերին աշխարհի էութեան մասին եղած հարցերը, ոչ ահսանելի աշխարհի այլ

մարդկային այնպիսի յարաբերութիւնների մասին, որը բարձր է իրանից և որ գտնուումէ իւր շուրջը և որոշումէ նրա զիբքը տիեզերքի մէջ։ Եւ այսպէս կամ այնպէս վճռելով այս հարցերը՝ մարդս իւր ուշադրութիւնը դարձնումէ մասնաւոր առարկաների և երեսյթների ուսումնասիրութեան վրայ, որպէս զի այդ շրջանում ևս աիրապետէ ծամարտութեան, ըմբռնէ իրական յատկութիւնները և այդ առարկաների ու երեսյթների յարաբերութիւնները։ Այստեղից հետեւումէ, որ մարդս ամեն ժամանակ, որպէս այդ մասին վկայումէ մարդկութեան հոգեւոր զարգացման պատմութիւնը, երեսցել է նախ որպէս փիլիսոփայտական կամ կէս—փիլիսոփայտական և կէս—կրօնական համակարգութիւններ և այնուհետեւ միայն անցել է իրան շրջապատող բնութեան ուսումնասիրութեան և փոքր առ փոքր հաւաքել է նիւթեր բնագիտութեան համար։ Այս երեսյթն ևս ընդհանրականութեան բնաւորութիւն ունի ու կատարուումէ ոչ միայն քաղաքակիրթ, այլ և բոլորովին վայրենի ազգերի մէջ։ Վայրենու միաքը մի անգամ՝ որ զարթնեց, ընդ միշտ պատումէ և վերացական հարցերի աշխարհում և պարունակումէ միշտ բաւականաչափ պաշար այս հարցե-

րին պատասխանելու համար. այնպէս որ
իւրաքանչիւր հասակաւոր վայրենի ներկայա-
նում՝ է որպէս իր տեսակի փիլիսոփայ: Յո՞ղ
նրա փիլիսոփայութիւնը լինի կոսկիտ և ման-
կականի չափ միամիտ, բայց այն հարցերը, որ նա
շօշափում է, կարող են համարձակ կերպով
դասուիլ ի շարս քաղաքակիրթ ազգերի ամեն
տեսակ փիլիսոփայութեան, որը միախառ-
նուելով վայրենի մարդու կրօնական գաղափար-
ների հետ, լցնում է, նրա հոգեոր կեան-
քըն այնպիսի խորիմաստ բովանդակութեամբ
որին անաշառ ուսումնասիրողը չի կարող
հիացմամբ և յարգանքով չը վերաբերուիլ:
Առաջին իսկ հայեացքից այդպիսի օտարութիւ-
ներեոյթը, մաքի այդպիսի ձգտումը փորձա-
ռութեան շըջանից դուրս, նախքան մարդուն
շըջապատող իրականութեան հետ ծանօթանա-
լը, է սակայն միանգամայն բնական երեոյթ,
և պէտք է ընդունել նրան ոչ միայն որպէս
մեր յատուկ բնական պահանջների անվիճելի
ապացոյց, ճանաչել ճշմարտութիւնը և տիրա-
պետել նրան, այլ և որպէս մի ակնյայանի վը-
կայութիւն, թէ բանականութիւնը նոյնպէս կա-
րող է անմիջական կերպով իմանալ, թէ ո՞ր տեղ
կարելի է գտնել նրա համար թանկագին ճըշ-
մարտութիւնը, եւ յիրաւի՝ ճշմարտութիւնը
միայն յիշեալ վերացական հարցերի վըժուե-

լու մշն է, և ձեռք բերել կարելի է այն միայն այդ հարցերի ուղղիղ վճռելովը. այսաեւ զից պարզ է, որ մարդս ունենալով այս հարցերի մինչև անդամ ամե ամիակողմանի և անկատար պատասխանները, դարձեալ հնարաւոր է լինում իսկական կենդանական կեանքից անցնել մարդկային ճշմարիտ բանական կեանքին։ Այս այն պատճառով, որ երբ մի մարդ մի անդամ վերոյիշեալ հարցերի պատասխաններն ստացել է, նրա համար արդէն հնարաւոր է դառնում ուղղել իւր գործունեութիւնը դէպի յայտնի և ճշտօրէն ճանաչուած նպատակները և այդպիսով մտածել նրանց մասին։ Ապա՝ մարդուս համար հնարաւոր է լինում։ սկզբունքի հիման վրայ, որոշակի սկսել իւր յարերութիւնները դէպի այլ մարդիկ և իրան շրջապատող իրականութիւնը, և դրանով ապահովել իւր հոգեոր զարդացման ապագայ յառաջադիմութիւնը։ Բնական է, որ մարդուքան աւելի մօտ է ճշմարտութեան և ուրքան լիակատար լինին վերոյիշեալ հարցերի պատասխանները, նոյնքան էլ աւելի խելացի և լիակատար կըլինի մարդուս կեանքը՝ իշխելով այդ հարցերին, որով աւելի հասկանալի է դառնում նրա համար շրջապատող աշխարհը։

Ատկայն մարդս յենուելով իւր սեպհական ոյժերին՝ անկարող է միանդամայն տիրապե-

տել ձշմարտութեանը վերացական հարցերի շրջանում, ընդ նմին և միանգամայն պարզել իւր համար մասնաւոր իրերի և երեսյթների միաբը: Աւստի և մարդուս դէպի ձշմարտութիւնն անդադար ձգտելու պատմութիւննը տալիս է, մի շարք սխալներ ու մօլորութիւններ և փիլիսոփայական համակարգութեանց տեսութիւնների ու հայեացընների մշտական փոփոխութիւնների մասին այն լուսաւոր բովէներն, երբ մարդու մտածելով որ արդէն տիրապետել է, ձշմարտութեանն, հիասքանչումով բացականչում է. «գտայ», միշտ տեղի են տալիս ծառնը հիասթախման, և նա տիսուր յուսահատութեամբ հարցնում է, ինքն իրան՝ «ի՞նչ է ձշմարտութիւնը»:

Բայց միթէ, խելքի այս արմատական սկզբնական հարցն ընդ միշտ պէտք է, անսպատասխան մնայ: Ո՞հ, ո՞չ այս հարցին պատասխան է, տալիս, մինչեւ իսկ այս հարցն աւելորդ է, դարձնում մարդկային կեանքի նպատակի վերաբերեալ անկեղծ վարդտպետութիւնը: Նա ուսուցանում է, որ Աստուած, որի հետ յաւիտեան հաղորդակցութեան է կոչուած իւրաքանչիւր հոգի, հէնց ինքը ձշմարտութիւնն է, ամենի սկիզբն ու վախճանը, ամենակատարեալ և բազմազան գերիմաստութիւնը: Աւստի և այն տեղ միայն, գերեզմանի սահմաններից

գուրս, Աստուծոյ լուսոյ առաջ, մարդու բանականութեան ձգտումն դէպի ճշմարտութիւնը լիակատար բաւարարութիւն կը գանէ: Այն ինչ որ մենք այստեղ միայն մասամբ ճանաչել ենք, անկատար է, միակողմանի է, և խորհրդաւոր, և այնտեղ այս ամենը կը վերանայ և իւրաքանչիւրի համար կը հանէ լիակատար գիտութեան հնարաւորութիւնը:

V.

Բայց եթէ մարդու մէջ զօրեղ է, ճշմարտութեան պահանջը և դէպի այն ունեցած ձգտումն անզուսպ, այն ժամանակ բարութեան պահանջը և դէպի այն ձգտումն է, և աւելի զօրեղ ու անզուսպ է լինում: Բարութեան գաղափարը յատուկ է, մարդու հոգուն, որը զարթնում է նրա մէջ զիաակցութեան զարթնելուն հետ: Այդ գաղափարը շատ մեծ նշանակութիւն ունի մարդու կեանքի և գործունելութեան ընթացքում և մի անփոխարինելի արժանաւորութիւն է նրա աչքում: Բարութեան գաղափարը մարդկային գործունելութեան վերաբերմամբ մի բոնագատիչ ոյժ է, որը հանդէս է գալիս մարդկային հոգու մէջ բարոյական օրէնքի ձեռվի: Բարոյական օ-

ըէնքը մարդուց պահանջում է, որ նա իւր
բոլոր գործողութիւնների մէջ իրագործէ, բա-
րին և իրան հեռու պահէ այն ամեն բանից, ինչ
որ հակառակ է բարութեան: Հնազանդելով այդ
պարտաւորեցուցիչ և ստիպողական պահանջ-
ներին՝ իւրաքանչիւրն իրան ի ներքուստ դոհ
է զգում: Խիզճը՝ բարութեան այդ անմիջա-
կան գիտակցութիւնը, վկայում է, որ այդ-
պէս գործելով՝ մարդս կատարում է, իւր
պարաքը և այդ վկայութիւնը ուրախացնում
և ամոքում է, նրան: Ճիշտ է մարդս իրեն-
մի ազատ էակ, կարող է և չըկատարել բարու-
յական օրէնքի այդ պահանջները, դրժել իւր
պարտքը, որպիսին գժբաղդաբար շատ յաճախո-
է պատահումն բայց այդպիսի գործողութիւնը
նրա համար անպատճ չի անցնում: որի հե-
տեւանքը լինում են տիսուր զգացմունքներ՝
խղճահարուիլն ու զզջալը և ամբողջ հոգեոր
կեանքի կանոնաւոր ու խաղաղ ընթացքի խան-
գարումն: Կեանքի մէջ բարութեան այսպիսի
մեծ նշանակութիւնը մարդուս համար անպայ-
ման արժեք ու զին ունի և բարութիւնից
աւելի բարձր ու վսեմ: բան նա անկարող է
մնածել և երեակայել: Աւստի և բարութիւնը
բոլոր արարածների համար ծառայում է, որ-
պէս արժանիքի չափ, այլ և այն բանի համար,
ինչ որ շըջապատռում է մարդուն, և այն բանի՝

ինչ որ հենց նրա մէջ գանուռում է։ Այն՝ ինչ
որ մենք գնահատում ենք, գնահատելի է այն
չափով, ինչ չափով որ նա տողորուած է, բառ
բոյական սկզբունքներով և կամ՝ այն չափով,
որով ուղղակի կամ կողմնակի կերպով նպաս-
տում է կեանքի մէջ բարոյական օրէնքի պա-
հանջների իրադորձման և թեթեացնում է
մարդու աշխատանքը այս իրականացման գոր-
ծում։ Մարդկային կեանքի մէջ բարութեան
ունեցած նշանակութեան և նրա անպայման
արժանիքի պատճառով ձգտումը դէպի նաև
եթէ ոչ իւրաքանչիւր անհատին գէթ առ հա-
սարակ մեծամասնութեան համար ներկայացել
և ներկայանում է որպէս տիրապետող ձըգ-
տումն։ Մասնաւոր և ընդհանուր կեանքի զա-
նազան յարաբերութիւններն ու ձևերը որո-
շելով և մշակելով՝ մարդս աշխատել է որպէս
հիմք ընդունել այս յարաբերութիւնների ու
ձևերի բարոյական սկզբունքը, ցանկացել է միշտ
տեսնել բարութեան գոյութիւնը որպէս իւր
մասնաւոր կեանքի, նոյնպէս և այլ մարդկանց
կեանքի մէջ, գլխաւորապէս այն ձևով, որն
աւելի շատ է արտայայտում նրա էռթիւնը,
որպիսին սէրն է։ Աէրը իւր բաղմազան ե-
րեսյթներով ամենայն իրաւամբ համարուումէ
արդարեւ մարդկային կեանքի կանոնաւոր զար-
դացման անհրաժեշտ պայմանը, մաքուր ու-

բախութիւնների և առհասարակ բաղզաւութութեան աղբիւրը։ Եւ մարդը սէրն աւելի բարձր է գտառւմ այն ժամանակ, երբ նա աւելի է մօտենում իւր իդեալին։ Աւստի և մեզանից իւրաքանչիւրն աւելի է գնահատում ծնողական սէրը, մանաւանդ մայրականը՝ սէր՝ որ կատարելապէս անկաշառ է, անձնուեր է, լսող հետեւող է և ուշաղիր։ սէր՝ որ իւրաքանչիւրի մէջ, ում՝ վրայ որ ապածուում է այն, ընդունակ է նշմարել և ըստ արժանւոյն գնահատել նոյն խոկ աննշան, բայց և բարի դժերը և մոքի ու զգացման ամենաթռուցիկ, բայց և մաքուր ու աղնիւ շարժողութիւնները։

Բայց ինչ որ ճշմարտութեան մասին ասուեցաւ, նոյնը հարկ է ասել և բարութեան վերաբերմամբ։ Ներկայ հանդամանքներում՝ մարդու համար բարութիւնը մնում է որպէս մի անհասանելի իդեալ։ Զգտելով նրան, մարդս ամենից առաջ բնականարար ցանկանում՝, որ նա իրականանայ իւր կեանքի մէջ։ Ասկայն մարդու ցանկութիւններն ու ձգտութները շատ զիպուածներում՝ մնում են լոկ ցանկութիւններ ու ձգտութներ, կամ թէ իրականանում են շատ աննշան աստիճանով, և յաճախակի ստիպուած ենք լինում սրտի դառնութեամբ կրկնել այն ամենը, ինչ որ մարդկային էութեան այնպիսի խոր հասկացողութեամբ։ Ա-

ռաքեալն արտայայտել է, չետևեալ խօսքերով։
«Ի մարմնի իմում ընակեալ է բարի ինչ զի
կամքն առաջի կան ինձ. և առնել զբարին՝ ոչ։
Զի ոչ եթէ՝ զոր կամիմ զբարին՝ առնեմ այլ
զոր ոչն կամիմ զբարն՝ զայն գործեմ։ Հաճեալ
եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մաշ-
գոյն։ Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամն իմ։
զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց. և դե-
րեալ զիս օրինօքն մեղաց՝ որ են յանդամն իմ։
(Ա. Հռովմ. Ե. 18, 19, 22 և 23): Արդարե-
մեղանից իւրաքանչիւրի ցանկութիւնը և ո
այն է, տեսնել բարութիւնը իրականացած. այլ
մարդկանց կեանքի և գործունելութեան մեջ՝
մնում է, անիրադորժելի լոկ ցանկութիւն։
Մարդկային կեանքը, ընդհանուր առ մամբ, ներ-
կայացնում է, ախուր տեսարաններ. Ճշմարտու-
թիւնը որ պէտք է ախրապեալը մարդկային
փոխադարձ յարաբերութիւնների մեջ, յաճախ
ոտնակոխ է լինում անարդար և անիրաւացի
կերպով։ Մարդկանց գործերում փոխանակ
սիրոյ առաջնորդող սկզբունքի՝ բազմութիւ զիս-
ուածներում երեսում է, ետասիրութիւնը, որը
տեղի է տալիս փոխադարձ զբկանքների, ան-
պատութիւնների անընդհատ փոփոխու-
թեան, ծանրագին վիրաւորանքների, ճնշում-
ների և զաղանային խասութիւնների և այս-
պիսով հաւասար կերպով տանջուում են թէ»

Ճնշողներն ու Ճնշուողները, և թէ՝ զրկողներն ու զրկուողները, թէ և տանջանքներն ըստ բնաւորութեան զանազան են լինում առաջինների և երկրորդների համար։ Այստեղից հետեւում է այն, որ մարդկային արիւնը և գառն արցունքները, հեղեղներով ուսոգելով երկիրը, որի վրայ բնակում է մարդկային ցեղը, անընդհատ բողոքում են երկներին։ Ախնում են այնպիսի ժամանակներ, երբ մարդկանց շրջանում առ հասարակ արագութեամբ ածում են ապօքէնութիւնների ամենայն տեսակները, և այն ժամանակ մարդկային ազգի ամենալաւ ներկայացուցիչների համար հասնում են դառնագին օրեր։ Նրանք փափագում են ճշմարտութեան և բարութեան, բայց չկան նրանք, իսկ նրանց շրջապատողներն ասում են՝ թէ ճշմարտութիւնն ու բարութիւնը, որոնց դուք փափագում էք, երբէք չեն եղել. թէ ճշմարտութեան և բարութեան մասին եղած հասկացողութիւնը չէնց իրանք մարդիկն են մտածել, որոնք անընդհատ փոփոխում են իրանց բովանդակութեամբ, ուստի և անսպայման պարտաւորութիւններ չեն զարգացած մարդկանց համար։ Բայց դրանք և դոյնանման կեղծ և անխոշեմ աղաղակներն ու մտածողութիւնները միայն մեծացնում են բարութեան և ճշմարտութեան պաշտպանների

վիշտը և նրանց մտքի մեջ ակամայ սկսում է ներս թափանցել կասկածը՝ մարդկային հոգու բնական բարձր ձգտումների ճշմարտութեան վերաբերմամբ:

Բայց այս անդամ ևս աւետարանական վարդապետութիւնը մարդկային կեանքի վախճանական նպաստակի վերաբերմամբ՝ մարդուն օգնութեան է դալիս, ասելով նրան, թէ բարութիւնը պատրանք չէ, և թէ դէպի նա ձրգտելին անօգուտ և անպատճեղ չի մնալ առանց բաւականութիւն ստանալու։ Ըստ որում Աստուած, որի հետ ամենաջերմեռանդ հաղորդակցութիւնը ներկայանում է, մարդու համար գերեզմանի սահմաններից դե՛նը, ոչ միայն ճշմարտութիւն է, այլ և բարութիւն և սէր Ուստի և իւրաքանչիւրը, որ ձգտում է Երկնաւոր Հօր բնակիչը լինելու, պետք է ամենաբարի Աստուածոյ հետ հաղորդակցութեան մեջ գտնուի, Աստուածային սիրոյ հովանու ներքոյ, որի թագաւորութեան մեջ տեղ չունի ինքնասիրութիւնը, հետեւապէս և չարութիւնը։ Եւ այդ կենսաատու և ամրապնդող սիրոյ գործողութեան ներքոյ անդադար և անարգել կըզարգանան և կըծագին բարութեան սկըզբունքներն աւելի ուժով որոնք դրուած են իւրաքանչիւրի հոգու մեջ և դէպի կեանք կը կոչուին մինչև անդամ այն բարի սկզբնաւո-

ըութիւնները, որոնք սաղմնային դրութեան մէջ աննկատելի մնում են մանուկների հոգու մէջ, որոնց համար և առուած է. «Զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից» (Մատ. ԺԹ. 14): Եւ այդ յաւիտենական և անփոփոխութիւնները, հայրական սէրը թափանցում է, մարդկային իւրաքանչյուր առանձին հոգու մէջ, բուժում է այն վէլքերը, որոնք պատճառել են երկրիս վրայ վշտերն ու տանջանքները և գնահատում է հոգու մէջ եղած ամեն բարին ու լաւը, թէ և քիչը, և կը վարձատրէ ամենքանի համար. — Եւ ծարաւեալին առուած մի բաժակ ցուրդ ջրի, և մերկին հազցրած հանգերձի, եւ դէպի տանջուողներն ունեցած ջերմ մասնակցական յարաբերութեան, և խորտակուած սրտի հառաջանքի, և զզջման ջերմ արաւասուքի համար:

Բայց ձ՛մարտութեան զիտակցութիւնը և ձանաչելը բանականութեան հանգստութիւն է տալիս: Հայրական, բուժիչ, արդար և կազդուրիչ այս սէրը կենդանացնում է, սիրան անասելի ուրախութեամբ. թէ մէկը և թէ միւսը հոգին լցնում են երանութեամբ, որն այժմ անհնարին է երեակայել և որը բնականապէս այսին ծառայէ իրեւ մեծ վարձատրութիւն վշտա ձանապարհի փոխարէն, որ հասցրել է կեանքի վախ ձանական նպատա-

կին, այն է՝ արքայութիւնը, որ պատրաստուած է աշխարհի հիմնարկութեան օրից և արժանացրել է մեզ Ճշմարտութեան և սիրոյ Աստուծոյ տեսոյն։ Արանից բարձրին արդե՛ն անհարելի է ձգտել և սրանից էլ լաւ բան անհնարին է ցանկանալ։

VI.

Այսպէս՝ աւետարանական վարդապետութիւնը կեանքի նպատակի մասին՝ դեմ յանդիման է, գալիս մարդկային բոլոր արմատական—սկզբնական պահանջներին և պատասխան է, տալիս նրա բոլոր իրական հարցերին։ Ուստի և այդ վարդապետութիւնը իւր բոլոր բարձրութեամբ հանդերձ, կարող է ձանապարհ գանել մարդկային ամեն հոգու մէջ, կարող է հանգստացնել նրան և ուրախացնել ծառայել իւրաքանչիւր անհատին մասնաւրապէս և ամենքին ընդհանրապէս իրրե պայծառ—լուսաւոր ուղեցոյց աստղ երկրաւոր կեանքի աղջամուղջի մէջ և կարող է ամենքին միաւորելի մի հոգեոր ամուր հանդոյցներով։

Յիրաւի՝ այսպէս էլ եղել է, երբ աւետարանական վարդապետութիւնը, կեանքի նպատակի մասին, առաջին անդամ՝ քարոզուե-

ցաւ աշխարհումն։ Աշխարհիս թէ դիտունները և թէ յիմարները ձանաշելովնրան, ամբողջ հոգւով ընդունեցին այն, ընդունելով՝ ուրախացան յուրախութիւն մեծ և այդ ուրախութիւնը փոխարինեց նրանց հոգու մեջ հեթանոսական յուսահատութեան և անյայտութեան կարօաը, որոնք դադարեցին անհանդասացնել, իրրեւ աւելորդ համարուած՝ այս հարցերը՝ «ի՞նչ է կեանքը, դէպի ո՞ւր է տանում և ինչու համար է նաև, քանի որ նրանց համար յայտնի եղաւ կեանքի բարձր նշանակութիւնը և նրա նպասասկը դադարեց հանելուկ լինելուց. բայց և ընդ նմին ընտառնեկան դժբաղզութիւններն ու վշտերը դիւրին և զիւրաասը թուացին։ Հալածեալներն ամեն կերպ ենթարկուում եին քաղցի, ծարաւի, մերկութեան, ծեծի ու կոփահարութեան, բարեսրառութեամբ համբերում եին, բամբառողներն ազօթում եին և նզովիալները փառաբանում (Ա. Կորնել. Դ. 11—13). *

* «Մինչև ցայսօր ժամանակի՝ և՝ քաղցեամ ծարաւեցաք, և՝ մերկ գնացաք, եւ կառափնահարեցաք և՝ անհանգիսան եղեաք. Եւ աշխատեցաք ձեռօք մերովք. բամբառէին զմեզ, օրհնէաք. Հալածէն, յանձն առնուաք. Հայհոյէին, աղաչէաք. իրրեւ առակ նշանակի եղեաք ամենայն աշխարհի, ամեննեցուն փարելի լինել մենչև ցայժմ։» (Ա. Կորնել. Դ. 11—13.).

շոտուողները հարձրեալին դոհաբանական օրհուներգութիւններ էին երգում։ Հրկիղեալները շշնչում էին խաղաղութեան և ընդհանուր ներման խօսքեր։ Ի նկատի առնելով ընդհանուրը մեծ նպատակը՝ նրանք միաբանական հասարակութիւն կազմեցին, որի մշջ մի հոգի կար, և կազմեցին այն եկեղեցու հաստատուն և անդրդուելի հիմն, որի գլուխն ինքը Քրիստոն է և որին, Տիրոջ խօսքի համաձայն՝ դրունք դժոխոց ոչ կարեն յաղթահարել։

Այս կամ այն վարդապետութիւնը, որ վերաբերում է մոքի և կեանքի սկզբնական հարցերին, երբէք չի մնում առանց ազգեցութեան այն մարդկանց կեանքի վրայ, որոնք նրան խրացրել են, և այդ ազգեցութեան բնաւորութեամբ էլ որոշուում է վարդապետութեան անարդարութիւնը և կամ ձշմարտութիւնը։ Կեղծիքի վրայ հիմնուած վարդապետութիւնը նոյնպիսի կեղծ ընթացք է տալիս և մոքերին, զգացումներին և առ հասարակ իւր հետեւողների հոգեւոր կեանքի ամեն հոսանքին, առաջնորդում է նրանց գեղպի պարսաւելի և անխոհեմ գործունեութիւն և միշտ մարդկային բազգաւորութեան թշնամի է հանդիսանում։ Ձշմարիտ վարդապետութեան հետ անբաժան են հակաղիր, հետեւաբար և բարերար հետեւանքները։ Եթէ

այդպէս է, ուրեմն այն փոխադարձ բարերար ազդեցութիւնը, որը հետեանք է աւետարանական վարդապետութեան կեանքի նպատակի մասին, իւր առաջին հաւատացեալ անձանց կեանքի վերաբերմամբ, հիմնաւորապէս յայտնի է կացուցանում նրա ճշմարտութեան անփիձելի ապացոյցը:

Աւետարանական վարդապետութիւնը պարզ կերպով ակնյայտնի է կացուցանում կեանքի վախճանական նպատակը, և իւրաքանչիւր աւետարանին ծանօթ անձն չի կարող չիմանալ, թէ ինչից է այն: Բայց իմանալ նպատակը չի նշանակում հասնել նրան: Կարելի է ճիշտ ծանօթութիւն ունենալ նպատակի մասին, բայց ընդնմին ոչ միայն մռանալ նրան, այլ միշտ հեռու և հեռու վախչել նրանից: Կեանքի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իմանալ և այն միջոցները, որոնք տանում՝ են գեպի նա, և անհրաժեշտ է օգտուիլ այն միջոցներից: Աւետարանը ևս ցոյց է տալիս այդ միջոցները: Աւետարանն ուսուցանում է, որ մարդս պարտաւոր է հաւատալ և սիրել եթէ կամենում է լուսարանել իւր համար կեանքի նշանակութիւնը և հասնել նրա վախճանական նպատակին: Աւետարանն ուսուցանում է, որ հաւատոյ և սիրոյ ճանապարհն է այն միակ ճա-

024

— 79 —

Նապարհը, որն առաջնորդում է, մեզ անկեղծ
ծօրէն կցորդուիլ—միանալ Երկնաւոր Հօր,
այն է՝ Աստուծոյ հետ:





